UN NOUVEL HOMMAGE AU GROUPE MANOUCHIAN

Alors qu'elle préparait nos jeunes danseurs, Christina Galstian, la chorégraphe de *Yeraz*, nous avait dit tourner dans un film de Robert Guédiguian où elle interprétait la maman de Charles Aznavour. Forts du contact qu'elle nous avait donné avec la production du film, nous avons suivi pas à pas sa mise au point : du producteur (*Agat film et compagnie*) au diffuseur (Canal plus) à la salle de projection à Lille.

C'est ainsi que plus de 80 Arméniens, dans une salle presque comble de plus de 300 places, s'étaient donné rendez-vous au cinéma UGC de la rue de Béthune à Lille le mardi 8 septembre pour assister à l'avant-première du film de Robert Guédiguian *L'armée du crime*. Peu d'entre eux connaissaient l'histoire de Missak Manouchian, cet ouvrier et poète arménien qui a donné sa vie pour une conception de l'humanité respectueuse et juste.

Louisette Lamarche, Garik Galstyan et Robert Guédiguian après le film
Լուիզեթ Լամարշը, Գարիկ Գալստյանը և Ռոբեր Գեդիկյանը՝ ֆիլմից հետո

Il est né le 1er septembre 1906 à Adiyaman, en Turquie d'aujourd'hui, dans une famille de paysans. Il perd ses parents lors du génocide et est recueilli avec son frère dans un orphelinat du protectorat français de Syrie. En 1925, ils vont à Marseille où Missak devient menuisier. Puis, il travaillera comme tourneur aux usines Citroën à Paris. Licencié dans les années 1930 au cours de la grande crise économique, il gagne sa vie en posant pour des sculpteurs. Il écrit des poèmes et fonde avec son ami Semma deux revues littéraires *Tchank* (Effort) et *Machagouyt* (Culture). Ils publient des articles concernant la littérature française et arménienne. Ils traduisent Baudelaire, Verlaine et Rimbaud en arménien. Parallèlement, ils s'inscrivent à l'Université de la Sorbonne en auditeurs libres et y suivent des cours de littérature, de philosophie, d'économie politique et d'histoire.

En 1934, Missak adhère au parti communiste. En 1935, il est élu secrétaire du comité de secours pour l'Arménie relié au mouvement MOI (Main d'œuvre émigrée). Il devient alors un mi-

ՆՈՐԻՑ ՄԵԾԱՐՈՒՄ՝ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ԽՄԲԻՆ

Լիլահայ պատանի պարողների նախապատրաստական դասերի ժամանակ «Երազ»ի պարուսույց Քրիստինա Գալստյանն ասել էր, որ նկարահանվում է Ռոբեր Գեդիկյանի նոր ֆիլմում, որտեղ նա մարմնավորելում է Շառլ Ազնավուրի մոր կերպարը: Ըստ նրա տված տեղեկությունների՝ մենք հետևել էինք ֆիլմի արտադրության ողջ ընթացքին՝ սկսած թողարկողից («Ազաթ ֆիլմ և ընկերներ») մինչև ցուցադրողը («Կանալ պլյուս»), այդ թվում նաև Լիլի կինոթատրոններից մեկում:

Եվ ահա 80-ից ավելի հայեր սեպտեմբերի 8-ին հավաքվել էին Լիլի Բեթյուն փողոցում գտնվող «UGC» կինոթատրոնի 300 տեղանոց գրեթե լեփ-լեցուն դահլիճում՝ դիտելու Ռոբեր Գեդիկյանի «Ոճրագործության բանակը» ֆիլմի պրեմիերան: Նրանցից քչերին էր հայտնի Միսաք Մանուշյանի կյանքի պատմությունը: Այս հայազգի բանվորը և բանաստեղծը իր կյանքը նվիրեց արդար ու արժանապատիվ մարդկության գաղափարներին:

Նա ծնվել է 1906 թ. սեպտեմբերի 1-ին Ադիամանում՝ ժամանակակից Թուրքիայում, գյուղացու ընտանիքում: Ցեղասպանության ժամանակ կորցնելով ծնողներին՝ նա եղբոր հետ հավաքագրվում է Ֆրանսիայի հովանավորության տակ գտնվող սիրիական մի մանկատանը: 1925 թ. նրանք գալիս են Մարսել, որտեղ Միսաքը զբաղվում է հյուսնագործությամբ: Ավելի ուշ նա, որպես փականագործ, աշխատում է Փարիզում՝ Սիթրոյենի գործարանում: 1930-ականների տնտեսական մեծ ճգնաժամի հետևանքով կորցնում է աշխատանքը և իր հացը վաստակում քանդակագործների մոտ՝ որպես բնորդ: Նա գրում է բանաստեղծություններ և ընկերոջ՝ Սեմայի հետ հիմնում է «Ջանք» և «Մշակույթ» գրական թերթերը: Նրանց հրապարակած հոդվածները վերաբերում էին ֆրանսիական և հայ գրականությանը: Նրանք հայերեն են թարգմանում Բոդլերի, Վերլենի և Ռեմբոյի գործերը: Զուգահեռաբար, որպես ազատ ունկնդիր, նրանք հաճախում են նաև Սորբոնի համալսարան, որտեղ ուսումնասիրում են գրականություն, փիլիսոփայություն, քաղաքական տնտեսագիտություն և պատմություն:

1934 թ. Միսաքը մտնում է կոմունիստական կուսակցության շարքերը՝ դառնալով նրա ակտիվ անդամներից մեկը: 1935 թ. ըն-

Robert Guédiguian, Simon Abkarian et Araxia Davtian après le film
Ռոբեր Գեդիկյանը, Սիմոն Աբգարյանը և Արաքսյա Դավթյանը՝ ֆիլմից հետո

litant permanent de ce parti. C'est là qu'en 1935 il rencontre Méliné qui deviendra sa femme. À la même époque, il est également responsable du journal *Zangou* (nom d'une rivière en Arménie).

Robert Guédiguian, Simon Abkarian et un groupe d'Arméniens de Lille
Ռոբեր Գեդիկյանը և Սիմոն Աբգարյանը մի խումբ լիլահայերի հետ

Au moment de la guerre 1939-1940, il travaille dans une usine de la région de Rouen, en qualité de tourneur. Mais rentré à Paris, après la défaite de juin 1940, il reprend ses activités militantes. Mais le parti communiste est interdit depuis septembre 1939. Il est arrêté au cours d'une rafle anticommuniste avant le 22 juin 1941, date de l'invasion de l'URSS par les Allemands. Interné à Compiègne, il est libéré au bout de quelques semaines.

Manouchian devient alors responsable de la section arménienne clandestine de la MOI. En février 1943, il est intégré au sein des francs-tireurs et partisans MOI de Paris. Son groupe est composé de Juifs roumains et hongrois et de quelques Arméniens. Puis il dirige 3 détachements pour un total d'une cinquantaine de militants. Ils accomplissent une trentaine d'opérations jusque novembre 1943 où il sera arrêté comme 68 de ses compagnons. Sa compagne Méliné échappera aux arrestations.

Torturés, lui et ses compagnons feront l'objet d'une affiche dite « rouge », que les Allemands placarderont en 15 000 exemplaires sur les murs de Paris dans le cadre de leur propagande contre ces « terroristes ». Elle présente Manouchian en ces termes « Arménien, chef de bande, 56 attentats, 150 morts et 600 blessés ». Mais cette affiche provoque l'effet contraire de celui espéré par les Allemands. Pour toute la résistance, elle devient l'emblème du martyre, et certains y notent de leur main en cachette « Morts pour la France ».

Le 21 février 1944, Manouchian et 22 de ses compagnons ont été fusillés au Mont-Valérien. Avant son exécution, il a écrit une lettre bouleversante à sa femme dans laquelle il disait son attachement au bonheur, à la justice et le fait qu'il n'en voulait pas aux Allemands. Aragon, en 1955, a écrit le poème *Strophes pour le souvenir* librement inspiré de la lettre de Manouchian. Celui-ci fut mis en musique par Léo Ferré sous le titre *L'affiche rouge* en 1959.

C'est ce poème qui nous fut interprété avant la projection du film avec talent par Araxia Davtian, en arménien, et par Victor Martinez, de l'association *Une poussière dans l'œil*, en français. Une occasion pour le public français d'entendre pour la première fois la langue arménienne.

Méliné Manouchian (née Assadourian) est morte en 1989. Elle ne s'est jamais remariée et a milité pour les idées et la mémoire de son mari jusqu'à sa mort.

De nombreux lieux en Région parisienne portent le nom de

տըրվում է «Հայաստանի օգնության կոմիտե»ի քարտուղար. Կոմիտեն կապված էր «Գաղթական աշխատուժ» շարժման հետ: Այստեղ էլ նույն թվականին հանդիպում է ապագա կնոջը՝ Մելինեին: Նույն ժամանակաշրջանում նա նաև «Զանգու» (գետ Հայաստանում) լրագրի խմբագիրն էր:

1939-1940 թթ. պատերազմի տարիներին նա որպես փականագործ աշխատում է Ռուանի շրջանում: 1940 թ. հունիսյան պարտությունից հետո վերադառնում է Փարիզ՝ ակտիվ գործունեություն վերսկսելու նպատակով: Սակայն կոմունիստական կուսակցությունը 1939 թ. սեպտեմբերից արգելված էր: 1941 թ. հունիսի 22-ի նախօրյակին, երբ ֆաշիստական Գերմանիան ներխուժեց ԽՍՀՄ, նա ձերբակալվում է կոմունիստների դեմ կազմակերպված շուրջկալներից մեկի ժամանակ: Միսակը արգելափակվում է Կոմպիեյնում և մի քանի շաբաթ հետո ազատ է արձակվում:

Մանուշյանը դառնում է ընդհատակյա «Գաղթական աշխատուժ»ի հայկական մասնաճյուղի պատասխանատուն: 1943 թ. փետրվարից նա համալրում է Փարիզում գործող «Գաղթական աշխատուժ»ի ազատ հրաձիգների և պարտիզանների շարքերը: Նրա խումբը կազմված էր հունգարացի և ռումինացի հրեաներից և մի քանի հայերից: Ավելի ուշ Միսակը գլխավորում է մոտ հիսուն մարտիկներից բաղկացած երեք ջոկատներ: Նրանք իրականացնում են մոտ երեսուն մարտական գործողություններ մինչև 1943 թ. նոյեմբեր ամիսը, երբ Մանուշյանը ձերբակալվում է իր 68 զինակիցների հետ: Մելինեին՝ նրա կողակցուհուն, հաջողվում է խուսափել հետապնդումներից:

La charmante Virgine Ledoyen (Méliné) bien entourée…
Հմայիչ Վիրժինի Լեդուայենը (Մելինե)՝ հուսալի շրջապատված…

Գերմանացիները նրան և նրա համախոհներին ենթարկեցին տանջանքների և «հերոսացրին» այսպես կոչված «Կարմիր ազդագրեր»ի վրա, որոնց 15 000 օրինակներ փակցվեցին Փարիզի շենքերի պատերին: Դա այդ «ահաբեկիչների» դեմ ուղղված քարոզչության մասն էր: Ըստ գերմանացիների՝ Մանուշյանը ներկայացվում էր որպես «հայ, հանցախմբի պարագլուխ. հիսունվեց ահաբեկչություն, հարյուր հիսուն զոհ, վեց հարյուր վիրավոր»: Բայց այդ ազդագրերը ոչ միայն չարդարացրեցին գերմանացիների սպասելիքները, այլև հակառակ ազդեցությունն ունեցան: Նրանք դարձան ամբողջ Դիմադրության շարժման խորհրդանիշ-նահատակները, որոնց անունների տակ շատերը գաղտնի գրում էին. «Զոհվեցին Ֆրանսիայի համար»:

1944 թ. փետրվարի 21-ին Մանուշյանը և նրա քսաներկու զինակիցները գնդակահարվեցին Մոն-Վալերիենում: Մահապատժից առաջ նա սրտաշունչ մի նամակ է գրում կնոջը, որտեղ խոսում է հավատարմության, երջանկության ու արդարության մասին, գրում է նաև, որ գերմանացիներից վրեժխնդիր չէ: Մանուշյանի նամակից անմիջականորեն ներշընչված, Արագոնը 1955 թ. գրում է «Զոն հիշողության» բանաստեղծությունը: Նույն մոտիվներով Լեո Ֆերրեն 1959 թ. գրում է «Կարմիր ազդագիրը» երաժշտական ստեղծագործությունը:

Manouchian : le parc où il a été arrêté à Evry, une rue dans le 20e arrondissement de Paris, une plaque déposée à son dernier domicile : 11 rue de Plaisance à Paris 14e.

Louisette Lamarche

RENCONTRE-DÉBAT AVEC ROBERT GUÉDIGUIAN, VIRGINIE LEDOYEN ET SIMON ABKARIAN

Cerise sur le gâteau, à laquelle nous avions eu du mal à croire jusqu'au dernier moment : les acteurs principaux du film et son réalisateur sont venus, à l'issue de la projection, débattre sur leur film. C'est avec un très grand plaisir et beaucoup d'émotion que nous avons pu partager ce moment. Voici quelques extraits de cet échange avec les spectateurs :

R. Guédiguian, S. Abkarian et V. Ledoyen répondent aux questions
Ռ.Գետիկյանը, Ս.Աբգարյանը և Վ.Լեդուայենը պատասխանում են հարցերին

Question : *Pourquoi avoir choisi de raconter cette histoire ?*
R Guédiguian : Il s'agissait de renouer le fil avec notre histoire que nous avons un peu oubliée, de rappeler les luttes populaires et la résistance de gauche. Ne nous demandons pas ce que nous aurions fait à leur place, mais ce qu'eux feraient aujourd'hui à notre place. Il s'agit d'un acte de résistance face à la société et à la politique d'immigration actuelle. Tous les cinéastes participent à leur manière aux débats de société, à la vie publique. Les résistants du groupe Manouchian avaient deux caractéristiques : ils étaient presque tous étrangers et défendaient tous un pays qui n'était pas le leur. C'étaient des internationalistes qui mettaient la condition humaine au-dessus de tout, sans nier pour autant leur provenance. C'est comme si, dans la vie, les identités restaient la forme et l'humanité était le fond. C'était vrai à l'époque et cela l'est toujours aujourd'hui. Le fondement de toute résistance c'est d'être du côté de la vie par-dessus tout, quitte à perdre la sienne.

Gourguen à la caméra (à gauche). G. Galstyan offre un cadeau d'Arménie à V. Ledoyen (à droite). Ձախից՝ Գուրգենն իր տեսախցիկով: Աջից՝ Գ. Գալստյանը Վ. Լեդուայենին է հանձնում հայկական հուշանվեր

Ֆիլմի ցուցադրումից առաջ Արաքսյա Դավթյանը՝ հայերեն, և «Փոշեհատիկը աչքի մեջ» միությունից Վիկտոր Մարտինեզը՝ ֆրանսերեն մեծ հմտությամբ ասմունքեցին այս բանաստեղծությունը: Այսպիսով ֆրանսիացի հանդիսատեսն առաջին անգամ հայերենը լսելու առիթ ունեցավ:

Մելինե Մանուշյանը (ծնված՝ Ասատուրյան) մահացել է 1989 թ.: Նա այդպես էլ երկրորդ անգամ չամուսնացավ և մինչև իր կյանքի վերջը պայքարեց ամուսնու գաղափարների և նրա հիշատակի համար:

Փարիզում ու նրա շրջակայքում շատ վայրեր կրում են Մանուշյանի անունը. Էվրիում գտնվող զբոսայգին, որտեղ նա ձերբակալվել էր, փողոց՝ Փարիզի 20-րդ թաղամասում, հուշատախտակ՝ Փարիզի 14-րդ թաղամասի Փլեզանսի 11 տանը, որտեղ նա ապրել է իր կյանքի վերջին տարիները:

Լուիզեթ Լամարշ

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՌՈԲԵՐ ԳԵԴԻԿՅԱՆԻ, ՎԻՐԺԻՆԻ ԼԵԴՈՒԱՅԵՆԻ ԵՎ ՍԻՄՈՆ ԱԲԳԱՐՅԱՆԻ ՀԵՏ

Ահա և հանդիպման ամենահաճելի և անհավատալի պահը. ֆիլմի ավարտից հետո բեմ են բարձրանում գլխավոր դերակատարները և ռեժիսորը՝ ֆիլմի քննարկմանը մասնակցելու: Մենք մեծ հաճույքով և հուզմունքով կիսեցինք այդ պահերը: Ներկայացնում ենք հատվածներ այդ քննարկումներից:

Հարց. Ինչու՞ ընտրեցիք հենց այս պատմությունը:
Ռ. Գեդիկյան. Մեր նպատակն էր անդրադարձ կատարել դեպի մեր պատմության փոքր-ինչ մոռացված էջերից մեկը՝ ժողովրդական պայքարին և ձախակողմյան շարժման դիմադրությանը: Մտածենք ոչ թե այն մասին, թե նրանց փոխարեն մենք ինչ կանեինք, այլ թե նրանք՝ մեր փոխարեն այսօր: Ասել է թե պայքարել մի կողմից՝ ժամանակակից հասարակության, մյուս կողմից՝ փախստականների նկատմամբ քաղաքականության դեմ: Բոլոր կինոգործիչները յուրովի են մասնակցում այս հասարակական քննարկումներին: Մանուշյանի խմբի քաջամարտիկներին կարելի է բնութագրել երկու տեսանկյունից. գրեթե բոլորը, լինելով օտարազգիներ, պաշտպանում էին մի երկիր, որն իրենցը չէր: Չժխտելով իրենց ծագումը՝ այս ինտերնացիոնալիստները մարդկային արժանապատվությունը ամեն ինչից վեր էին դասում: Այլ կերպ ասած, ինչպես կյանքում, ինքնությունը մնում է ձևը, իսկ մարդասիրությունը՝ բովանդակությունը: Դա այդպես էր ժամանակին և այսօր էլ արդիական է: Յուրաքանչյուր դիմադրության հիմքում սեփական կյանքի գիտակցված նվիրաբերումն է:

Simon Abkarian après le rencontre-débat du film *L'Armée du crime*
Սիմոն Աբգարյանը «Ոճրագործների բանակը» ֆիլմի քննարկումից հետո

Հարց. Ինչպե՞ս են ստանում այդպիսի դեր:
Ս. Աբգարյան. Փոստի միջոցով... Ինձ համար մեծ պատիվ էր խաղալ այդ դերը, ու ես դա արեցի հաճույքով և հպարտությամբ: Ավելին, ես

Question : *Comment reçoit-on un tel rôle ?*

S. Abkarian : Par la poste… C'est un grand honneur de jouer un tel rôle, je l'ai interprété avec joie et fierté. De plus, il exprime une vision du monde, celle de Robert Guédiguian que je partage.

V. Ledoyen : On reçoit un tel rôle avec modestie, pour bien rendre hommage aux personnes. C'est un film qui parle de la condition humaine avec un grand H.

Question : *Monsieur Guédiguian, vous avez deux origines, allemande et arménienne, comment ont-elles influé sur votre film ?*

R. Guédiguian : Cela a bien entendu influencé mon intérêt pour cette histoire dont j'ai entendu le récit vers l'âge de dix ans, mais bien au-delà cela a influencé toute ma vie. J'ai eu très tôt conscience d'appartenir à la fois à un peuple qui a subi un terrible génocide et à un autre qui a commis le plus grand génocide. J'en ai hérité une haine viscérale de tout ce qui peut conduire à opposer les peuples.

Question : *Beaucoup de films ont récemment porté sur cette époque, quel rapport à la période actuelle ?*

V. Ledoyen : Ce n'est pas une mode, c'est une période des plus marquantes du siècle dernier. Il est normal qu'elle inspire les cinéastes. Elle a généré des actes de barbarie épouvantables et des actes de courage incroyables. C'est un film qui a une résonnance par rapport aux questions du repli identitaire, de l'engagement dans notre société individualiste actuelle.

R. Guédiguian : La période de la Deuxième guerre mondiale a été un moment où choisir l'opposition était plus naturel. Il s'agit de modalités d'engagement et de générosité perdues aujourd'hui. La raison de l'engagement de chacun des hommes du groupe Manouchian était différente, chacun avait son histoire propre. Ils se sont regroupés autour d'une idée de l'humanisme qui n'est plus si développée de nos jours. Je souhaite réveiller cette conscience-là chez les jeunes.

Question : *J'aimerais être aimé comme Méliné a aimé son mari.*

V. Ledoyen : Les Arméniennes sont de grandes amoureuses. Au delà, Méliné partage les idées de son mari. Manouchian a signé sa dernière lettre ainsi : « *Ton ami, ton camarade, ton mari* ».

S. Abkarian : Ils ont également conscience d'être à un moment de l'humanité où tout peut disparaître. Ils ont tous deux vécu le génocide, ils s'appelaient entre eux « *mon orphelin et mon orpheline* ». Ils savaient la valeur de la bouchée de pain, du verre d'eau et du baiser.

Question : *Vous avez su montrer que la période était complexe, il n'y avait pas les bons, d'un côté, et les mauvais, de l'autre. Les gens ont été obligés d'aller jusqu'à ces extrêmes.*

R. Guédiguian : Effectivement, il y avait de vrais salauds dans les brigades spéciales, mais il y avait aussi des gens qui faisaient simplement bien leur travail sans se poser de questions. La peur et l'indifférence sont graves. Commettre des attentats c'était moche également, mais c'était légitime. L'indiscipline de certains membres de la résistance était humaine. Les chefs faisaient leur boulot même s'ils partageaient parfois les sentiments de leurs hommes. Bien sûr l'engagement individuel d'un jeune homme est plus beau qu'une organisation. Mais, il fallait être efficace. Ce sont les limites de l'engagement.

Question : *Sans la lettre de Manouchian, comment auriez-vous conclu votre film ?*

R. Guédiguian : Je l'aurais écrite moi-même ! Sans la lettre et la diffusion qui en a été faite, sans l'affiche des Allemands, il n'y aurait peut être pas eu de film. Ils sont devenus des personnages de légende que l'on magnifie. Je n'ai pas cherché à faire un documentaire.

V. Ledoyen : Méliné, malgré la demande de son mari dans sa lettre, ne s'est jamais remariée et n'a pas eu d'enfants. C'est dire la force et la grandeur de son amour.

կիսում եմ Ռոբեր Գեդիկյանի այն աշխարհայացքը, որն արտահայտում է իմ կերտած կերպարը:

Վ. Լեդուայեն. Այսպիսի դերը պետք է ընդունել համեստորեն՝ հերոսներին արժանին մատուցելու համար: Ֆիլմը պատմում է մեծատառերով մարդկանց արժանապատվության մասին:

Հարց. Պարոն Գեդիկյան, դուք ունեք գերմանական և հայկական ծագում, ինչպիսի՞ ազդեցություն է գործել այդ հանգամանքը կինոնկարի ստեղծման վրա:

Ռ. Գեդիկյան. Մանուշյանի խմբի մասին պատմությունը ես լսել էի դեռևս մոտ 10 տարեկան հասակում: Դա ոչ միայն ազդել է ֆիլմի, այլև առհասարակ իմ ամբողջ կյանքի վրա: Ես շատ շուտ գիտակցեցի, որ միաժամանակ պատկանում եմ մի ժողովրդի, որը ենթարկվել է սարսափելի ցեղասպանության և մեկ այլը, որը կատարել է ամենամեծ ցեղասպանությունը: Այստեղից է իմ խորին ատելությունը այն ամենի հանդեպ, ինչը կարող է թշնամություն հարուցել ժողովուրդների միջև:

Հարց. Վերջին ժամանակներս այդ շրջանի մասին բազմաթիվ ֆիլմեր են նկարահանվում, որքանո՞վ են դրանք այսօր արդիական:

Վ. Լեդուայեն. Դա մոդային տուրք չէ. անցած դարի ամենանշանակալից ժամանակահատվածը լինելով՝ այն բազմաթիվ կինոգործիչների է ոգեշնչում: Այդ շրջանը հարուստ է զարհուրելի բարբարոսություններով և անհավատալի քաջագործություններով: Ֆիլմն արձագանքում է մեր ինքնության վայրիվերումներին և այսօրվա խիստ անհատականացված հասարակության արժեքներին:

Ռ. Գեդիկյան. Երկրորդ համաշխարհային պատերազմը մի ժամանակաշրջան էր, երբ ամենաբնական երևույթը դիմադրելն էր: Էականը այստեղ ստանձնած պարտավորությունների որակն էր և մեծահոգությունը, որը այսօր իսպառ բացակայում է: Մանուշյանի խմբում յուրաքանչյուրը զինվորագրվելու իր պատճառները և իր սեփական պատմությունն ուներ: Նրանք միավորվեցին մի մարդասիրական գաղափարի շուրջ, որը մեր օրերում այնքան էլ ընդունված չէ: Ահա այս գիտակցությունն է, որ ես ուզում եմ արթնացնել այսօրվա երիտասարդության մեջ:

Հարց. Ես էլ կուզենայի սիրվել այնպես, ինչպես Մելինեն էր սիրում իր ամուսնուն:

Վ. Լեդուայեն. Հայուհիները մեծ սիրահարներ են: Բացի դրանից, Մելինեն կիսում էր ամուսնու գաղափարները: Մանուշյանը այսպես էր ստորագրել իր վերջին նամակը. «Քո ընկեր, քո գաղափարակից, քո ամուսին»:

Ս. Աբգարյան. Նրանք նաև գիտակցում էին, որ ապրում են մարդկության համար մի վճռորոշ ժամանակաշրջանում, երբ ամեն ինչ կարող էր վերջանալ: Նրանք երկուսն էլ վերապրել էին ցեղասպանությունը և մեկմեկու անվանում էին «իմ որբուկ»: Նրանք շատ լավ գիտեին մի կտոր հացի, մի բաժակ ջրի և համբույրի արժեքը:

Հարց. Դուք կարողացել եք ցույց տալ, որ դա մի դժվարին ժամանակաշրջան էր, որտեղ չկային մի կողմում լավեր և մյուսում՝ վատեր: Մարդիկ ստիպված էին դիմել ծայրահեղ քայլերի:

Ռ. Գեդիկյան. Իրոք, հատուկ բրիգադների անդամները ոչ թե իսկական սրիկաներ էին, այլ մարդիկ էին, որոնք առանց իրենց հարցեր տալու պարզապես լավ էին կատարում իրենց գործը: Ամենուրեք տիրում էին վախն ու անտարբերությունը: Ահաբեկչություն գործելը նողկալի էր, բայց և՝ օրինաչափ: Դիմադրության որոշ անդամների անկարգապահությունը նույնպես մարդկային էր: Երբեմն համամիտ լինելով նրանց հետ՝ ղեկավարներն անում էին իրենց գործը: Իհարկե, մի երիտասարդի անհատական ստանձնած գործը ավելի գեղեցիկ է, քան մի կազմակերպությանը: Սակայն պետք էր լինել արդյունավետ: Այս բոլորը նրանց զինվորագրվելու սահմաններն էին:

Հարց. Ինչպե՞ս կեզրափակեիք կինոնկարը, եթե չլիներ Մանուշյանի գրած նամակը:

S. Abkarian : Ce film permet de mesurer l'abîme qui nous sépare du courage. Malgré leur souffrance individuelle, ils sont allés au bout de leurs idées. La violence n'est pas une finalité en soi.

Louisette Lamarche

UN ÉCHO

« Le film *L'Armée du crime* j'en avais entendu parler à la radio « en diagonale », et avais retenu la position politique du réalisateur, ce qui a provoqué chez moi certaines réserves, non par rapport à la position qui est la sienne, mais par rapport à tout film censé être orienté idéologiquement. Après l'avoir vu et avoir écouté les commentaires médiatiques, à l'instar du film *Indigènes*, je me suis dit que oui, qu'il est très important aujourd'hui de dessiner le visage étranger de la résistance, les visages oubliés des monuments commémoratifs en France. Dessiner dans tous les supports possibles, pour les spécialistes et le grand public, comme un cri de colère contre les représentations monolithiques, monochromatiques, monophoniques du récit historique. Des films comme *L'Armée du crime* font la lumière sur la tenace uniformité de ces dernières. Des éclairages arabes, noirs, arméniens et étrangers sont comme un air frais qui circule dans les recoins du discours historique, dans les espaces oublieux et mesquins du quadrillage largement médiatisé qui nous est présenté, surtout de nos jours, en France ».

Ricio Zavala Virreira doctorante
à l'Université de Lille3

JOURNEE INTERCULTURELLE DES ASSOCIATIONS

Pour la deuxième année, l'association *Ararat* a été conviée par la Maison des Associations de Lille à une journée interculturelle le 20 septembre 2009. Nous avons pris place cette année entre les Suédois et les Japonais. Les Américains du Sud étaient fortement représentés et ont agrémenté notre après-midi de leur musique. Les Corses nous ont chanté quelques airs de leur île. Le théâtre était également à l'honneur. Une danse finale nous a tous réunis dans la cour.

Les visiteurs étaient nombreux devant la table de l'association *Ararat*
Այցելուները բազմաթիվ էին «Արարատ» միության տաղավարի առջև

Les membres d'*Ararat* étaient à l'écoute des visiteurs
«Արարատ»ի անդամներն ուշադիր էին այցելուների հարցերին

Ռ. Գեդիկյան. Ես ինքս այն կգրեի: Եթե նամակը չլիներ և չտարածվեր, եթե չլինեին գերմանացիների ազդագրերը, չէր լինի և կինոնկարը: Նրանք դարձան լեգենդար կերպարներ, որոնցով հիանում են: Ես չեմ փորձել փաստավավերագրական գործ ստեղծել:

Վ. Լեղուայեն. Մելինեն, չնայած ամուսնու նամակում գրված խնդրանքին, երբեք չամուսնացավ և երեխա չունեցավ: Սա խոսում է նրա մեծ և ուժգին սիրո մասին:

Ս. Աբգարյան. Այս ֆիլմը թույլ է տալիս չափելու խիզախությունից մեզ բաժանող անդունդը: Չնայած յուրաքանչյուրի անհատական տառապանքներին, նրանց միավորողը գաղափարներն էին: Բռնությունն վերջնական ինքնանպատակ չէ:

Լուիզեթ Լամարշ

ԱՐՁԱԳԱՆՔ

«Ոճրագործության բանակը» ֆիլմի մասին որոշ տեղեկություններ ես լսել էի ռադիոյով: Ինձ շատ էր տպավորել ռեժիսորի քաղաքական դիրքորոշումը, որը և առաջացրել էր որոշակի վերապահումներ: Բայց սրանք չէին վերաբերում հենց հեղինակի դիրքորոշմանը, այլ բոլոր այն ֆիլմերին, որոնք ունեն գաղափարական ուղղվածության հակում: Այս կինոժապավենը նայելուց և լրատվամիջոցների վերլուծությունները կարդալուց հետո, «Բնիկները» ֆիլմի օրինակով, ես ինքս ինձ ասացի, որ այո՛, այսօր շատ կարևոր է շեշտադրում կատարել դիմադրության շարժման ծագումով ոչ ֆրանսիացի գործիչների՝ Ֆրանսիայի հուշարձաններում մարմնավորված մոռացված դեմքերի վրա: Մասնագետների և հասարակական լայն շրջանների համար լրատվության տարածման բոլոր հնարավոր միջոցներով հարկավոր է հանդես գալ, որպես զայրույթի ճիչ, պատմության միատարր, միագույն և միապաղաղ ներկայացման շարադրման դեմ: «Ոճրագործության բանակ»ի նման ֆիլմերը լույս են սփռում այդ համառորեն ընդունված ներկայացման միակերպության վրա: Արաբի, հայի, սևամորթի, օտարերկրացու տեսանկյունից մեկնաբանությունները նման են թարմ օդի, որն անցնում է պատմական տեսաբանման բոլոր ելևէջներով, լրատվամիջոցների լայնորեն ներկայացրած մոռացության մատնված ժամանակահատվածի խղճուկ շրջանակներով, որը հատկապես այսօր մեզ է մատուցվում Ֆրանսիայում:

Ռոսիո Զավալա Վիրրեյրա
Լիլ3 համալսարանի ասպիրանտ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԸ

2009 թ. սեպտեմբերի 20-ին, արդեն երկրորդ անգամ, Լիլ քաղաքի Միությունների տան հրավերով «Արարատ» հասարակական կազմակերպությունը մասնակցեց միջմշակութային օրվան: Այս տարի մեր տաղավարի կողքին էին գտնվում շվեդականն ու ճապոնականը: Լատինական Ամերիկայի երկրները շատ լավ էին ներկայացված, և օրվա երկրորդ կեսը անցավ նրանց երաժշտության մեղեդիների ներքո: Կորսիկացիները երգեցին իրենց ազգային մի քանի երգ: Թատերականացված բեմադրությունները նույնպես բարձր գնահատվեցին: Տոնը եզրափակվեց շուրջպարով, որը համախմբեց ներկաներին:

Աննան և Սիրանուշը պատրաստել էին հայկական ուտեստներ, որոնցով մենք հյուրասիրեցինք ներկաներին: Համտեսելու համար կային ինչպես քաղցրեղեն (տարբեր մուրաբաներ, նռան ու մոշի գինիներ, թարխունի ըմպելիք...), այնպես էլ աղի (թթվեղեն և ապխտած միս) և այլ ախորժաբեր ուտեստներ:

Մենք մեր տաղավարում ներկայացրել էինք հայկական խոհանոցի մասին գրքեր, մեր թերթի վերջին համարները և աշխարհագրական քարտեզներ, որոնք հնարավորություն տվեցին հայկական մշակույթից անտեղյակ հյուրերին ծանոթացնել Հայաստանին: Օգտվելով ընձեռնած հնարավորությունից՝ մենք նաև գովազդեցինք «Ոճրագործության բանակը» ֆիլմը, որի պրեմիերան կայացել էր մի քանի օր առաջ:

Anna et Siranouche nous avaient cuisiné quelques spécialités que nous avons données à goûter à nos visiteurs avec d'autres saveurs salées (marinades et *bastourma*) et sucrées (confitures diverses, vins de grenade et de mûre, limonade d'estragon…).

Nous avions apporté quelques livres de cuisine arménienne, les derniers numéros de notre gazette et des cartes géographiques afin de situer l'Arménie pour des visiteurs complètement ignorants de notre culture. Nous avons également profité de cette manifestation pour faire la publicité du film *L'Armée du crime* dont nous venions de fêter l'avant-première.

Une danse finale nous a tous réuni dans la cour
Տոնը եզրափակվեց շուրջպարով, որը համախմբեց ներկաներին

La Maison des associations de Lille réunit de nombreuses associations dont la nôtre. Elle propose des manifestations, des formations, des permanences d'experts et un petit journal. Alors, si vous cherchez une information sur les associations à Lille, quel qu'en soit le thème (sport, culture, insertion, citoyenneté, santé…), allez-y, elle se situe à l'adresse suivante : 72/74 rue Royale, site Internet : http://mda.mairie-lille.fr.

Louisette Lamarche

LES JEUX DE NAVASARD

Les 12-13 novembre, le Cercle Bernard Jeu a organisé un colloque qui s'est tenu aux Archives Nationales du Monde du Travail à Roubaix, intitulé : « Jeu et enjeu culturels du sport ».

Garik Galstyan a présenté une communication sur le sujet : « Le sport et le jeu dans la culture arménienne ». Nous présentons un extrait de son intervention qui concerne les Jeux de Navasard.

En Arménie Ancienne, tout au long de l'année, il existait plus de 40 fêtes culturelles et sportives, dont une dizaine particulièrement populaires, dédiées aux dieux païens. Ces fêtes comportaient toutes au moins trois « programmes » : un rituel, un culturel et un sportif. Certaines ont été oubliées avec le temps, mais d'autres ont été conservées jusqu'à nos jours. Les principales d'entre elles étaient : la Bénédiction de l'eau (en janvier, la renaissance de la nature), le *Barekendan* (en février, le réveil de la nature), *Trndez* (en février, dédiée au dieu du soleil et du feu Mihr), le Grand Jeûne (en février), le *Tsarkazard* (mars-avril, dédié au culte de l'arbre), la Pâques (mars-avril, l'annonce du printemps, la naissance des animaux et le début de l'ensemencement), l'Ascension (en mai, la fête de la jeunesse et de la fertilité), le *Vardavar* (juillet-août, dédié à la déesse de la beauté Astrik), le *Navasard* (en août, dédié au dieu Amanor). Pratiquement toutes

Լիլ քաղաքի Միությունների տունը համախմբում է բազմաթիվ միություններ, այդ թվում և հայկականը, առաջարկում է միջոցառումներ, վերապատրաստման դասընթացներ, պարբերաբար հանդիպումներ մասնագետների հետ և ամենամսյա թերթ: Եթե դուք փնտրում եք տեղեկատվություն Լիլ քաղաքում գործող միությունների մասին՝ անկախ նրանց գործունեության բնույթից (սպորտ, մշակույթ, մասնագիտական և քաղաքացիական կողմնորոշում, առողջապահություն...), ապա այցելեք Ռուայալ փողոցի 72/74 շենքը, կայքէջ՝ http://mda.mairie-lille.fr.

Լուիզեթ Լամարշ

Abondance habituelle de spécialités arméniennes sucrées et salées
Հայկական աղի և քաղցր ուտեստների սովորական առատություն

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԽԱՂԵՐ

Նոյեմբերի 12-ին և 13-ին Ռուբե քաղաքի Աշխատանքի ազգային արխիվում տեղի ունեցավ գիտաժողով՝ «Խաղի և սպորտի մշակութային նշանակությունը» խորագրի ներքո: Գիտաժողովը կազմակերպվել էր «Բեռնար Ժյուի համակիրներ» միության ջանքերով:

Գարիկ Գալստյանը ներկայացրեց մի ելույթ, որը կրում էր «Սպորտը և խաղը հայկական մշակույթի մեջ» խորագիրը: Ստորև ներկայացնում ենք նրանից մի հատված, որը վերաբերում է Նավասարդյան խաղերին:

L'ouverture du colloque « Jeu et enjeu culturels du sport »
«Խաղի և սպորտի մշակութային նշանակությունը» գիտաժողովի բացումը

Հին Հայաստանում ամբողջ տարվա ընթացքում գոյություն ունեին 40-ից ավելի սպորտային և մշակութային տոներ: Դրանցից մոտ տասը, որոնք նվիրված էին հեթանոսական աստվածներին, վայելում էին հատուկ ժողովրդականություն: Այս բոլոր տոները բաղկացած էին երեք հիմնական մասից՝ ծիսական, մշակութային և մարզական: Ժամանակի ընթացքում նըրանց մի մասը մոռացվել է, իսկ մյուսները պահպանվել են մինչև մեր օրերը: Ամենակարևորներից նշենք Ջրօրհնեքը (հունվարին, բնության վերածնունդ), Բարեկենդանը (փետրվարին, բնության զարթոնք), Տյառընդառաջը (փետըրվարին, նվիրված արևի և կրակի աստված Միհրին), Մեծ Պահքը (փետրվարին), Ծաղկազարդը (մարտ - ապրիլին, նվիրված ծառի

les principales fêtes païennes ont ultérieurement été christianisées. Les courses à cheval, la lutte, le polo et autres sports et jeux sportifs étaient inséparables de ces fêtes, religieuses à la base.

Le Navasard[1] sans doute était la plus populaire des fêtes nationales. Le nom vient de la désignation du premier mois de l'année qui durait du 11 août au 9 septembre. Le premier jour du Navasard correspondait au deuxième Nouvel an arménien, le premier étant le 21 mars (le jour de l'équinoxe de printemps). Dans les mythes arméniens, c'est lors de ce mois qu'après le déluge Noé a accosté dans le pays arménien. Après les cérémonies religieuses et les sacrifices d'animaux dédiés aux dieux, à la récolte et aux moissons, commençaient les festivités avec beaucoup de divertissements et dans un climat de participation collective. Différents types de tournois sportifs en faisaient partie : la course, le tir à l'arc, la lutte à la corde, les jeux de crosse, *etc*. Il est à noter que la fête de *Navasard* a été populaire bien avant la formation de l'État arménien sous Artaxias I.

Garik Galstyan lors de son intervention / Գարիկ Գալստյանը՝ ելույթի ժամանակ

Des quatre coins de la Grande Arménie les Arméniens (paysans, artisans, acteurs, mimes, funambules, devins, chantres avec leurs instruments musicaux) effectuaient un pèlerinage pour se réunir à Bagavan[2] pour six jours (du 11 au 16 août), sous les tentes ou en plein air. Les concours sportifs aussi bien entre les équipes (les représentants des régions, villes et villages) qu'entre les individus se déroulaient sur les *asparez*[3] spécialement conçus. L'essentiel lors de ces concours était la démonstration de la force physique masculine (la participation des femmes y était interdite) et de la puissance militaire. Le roi, la reine, les courtisans, les princes, le clergé honoraient toujours les jeux de leur présence. Les premiers jeux ont eu lieu en 2492 avant J.-C. et ont été ont été dédiés à la victoire du Patriarche Haïk, habile tireur à l'arc, contre le géant de Babylon Bel.

Certains jeux sportifs, devenus aujourd'hui des disciplines sportives à part entière, étaient considérés comme un moyen d'éducation physique et d'entrainement du corps : lutte, pugilat, course de relais, course sur différentes distances, sauts, jeux sportifs de ballon (polo, crosse), danse sur corde raide, *etc*. Les autres étaient de nature militaire : tir à l'arc, lancer du javelot, escrime,

[1] Emprunt iranien : « nava » – nouveau, « sard » – an = Le Nouvel An.
[2] Près d'Alachkert en Arménie Occidentale, sur la rive droite de la rivière Aratsani.
[3] Emprunt persan : « *asp* » – « cheval », « *rez* » – « stade sportif multi-usage », signifie « stade (mesure), piste de courses ». Les *asparezs* avaient une longueur de 160 à 230 mètres.

պաշտամունքին), Զատիկը (մարտ-ապրիլին, գարնան գալուստ, կենդանիների ծնունդ և ցանքի սկիզբ), Համբարձումը (մայիսին, երիտասարդության և պտղաբերության տոն), Վարդավառը (հուլիս-օգոստոսին, նվիրված գեղեցկության աստվածուհի Աստղիկին), Նավասարդը (օգոստոսին, նվիրված Ամանոր աստծուն): Գրեթե բոլոր գլխավոր հեթանոսական տոները հետագայում քրիստոնեացվել են: Ձիավազքը, ըմբշամարտը, պոլոն, այլ մարզաձևերն ու մարզական խաղերն անբաժան էին այս ի սկզբանե կրոնական տոներից:

Նավասարդը[4], անկասկած, ամենատարածված ազգային տոնն էր: Անվանումը գալիս է տարվա առաջին ամսվա անունից, որը սկսվում էր օգոստոսի 11-ին և վերջանում սեպտեմբերի 9-ին: Նավասարդի առաջին օրը համընկնում էր հայկական երկրորդ Նոր տարվան, առաջինը մարտի 21-ին էր՝ գարնան գիշերահավասարի օրը: Հայկական առասպելների մեջ այս ամսվա ընթացքում էր, որ Նոյի նավը ջրհեղեղից հետո հանգրրվանեց հայոց երկրում: Կրոնական ծիսակատարություններից և աստվածներին, բերքահավաքին ու հունձքին նվիրված կենդանիների զոհաբերությունից հետո սկսվում էին տոնական բազմաբնույթ միջոցառումները, որոնց մասնակցում էին գրեթե բոլորը: Խաղերի մասն էին կազմում տարբեր տեսակի մարզական մրցումներ՝ վազքը, նետաձգությունը, պարանակռիվը, մականախաղերը և այլն: Նշենք, որ Նավասարդի տոնը շատ տարածված էր Արտաշես Ա-ի օրոք՝ հայոց պետականության ստեղծումից շատ առաջ:

Մեծ Հայքի բոլոր անկյուններից հայերը (գյուղացիներ, արհեստավորներ, դերասաններ, միմոսներ, լարախաղացներ, գուշակներ, երաժիշտներ՝ իրենց նվագարաններով) վեցօրյա (օգոստոսի 11-ից՝ 16-ը) ուխտագնացություն էին կատարում դեպի Բագավան[5] և հանգրվանում վրանների կամ էլ բաց երկնքի տակ: Մարզական մրցումները, ինչպես թիմային, որոնք ներկայացնում էին շրջաններ, քաղաքներ և գյուղեր, այնպես էլ անհատական, տեղի էին ունենում հատուկ նախատեսված ասպարեզներում[6]: Այս մրցակցությունների հիմնական իմաստը տղամարդու ֆիզիկական ուժի (կանանց մասնակցությունն արգելված էր) և ռազմական հզորության դրսևորումն էր: Թագավորը, թագուհին, պալատականները, իշխանները, կղերականներն իրենց ներկայությամբ միշտ շուք էին տալիս խաղերին: Առաջին խաղերը տեղի են ունեցել մ.թ.ա. 2 492 թ. և նվիրված են եղել հմուտ նետաձիգ Հայկ Նահապետի հաղթանակին Բաբելոնի տիրակալ Բելի դեմ:

Որոշ մարզական խաղեր, որոնք այսօր դարձել են առանձին սպորտաձևեր, ֆիզիկական դաստիարակության և մարմնի կոփման միջոց էին՝ ըմբշամարտը, բռնցքակռիվը, փոխանցումային և տարբեր հեռավորության վազքերը, ցատկերը, գնդակով սպորտային խաղերը (պոլո, մականախաղ), լարախաղացությունը և այլն: Մյուսները ռազմական բնույթ էին կրում՝ նետաձգություն, գուրզի նետում, սուսերամարտ, ձիավարժություն, պարսատիկանետում: Պարերը, հատկապես լեռնական և ռազմական բնույթի, որոնք հատուկ ուշադրության էին արժանանում տոնակատարությունների ժամանակ, նույնպես պահանջում էին զգալի ֆիզիկական պատրաստվածություն: Հետաքրքիր է նաև նշել, որ մարզական մրցումները միշտ զուգահեռաբար ուղեկցվում էին երգի, ասմունքի, լարախաղացության և այլ մրցույթներով:

Նավասարդյան տոնը խոր արմատներ է գցել հայ ժողովրդի ավանդույթների մեջ: Անգամ քրիստոնեության տարածումն ու հաստատումը հայոց հողի վրա չկարողացավ արմատախիլ անել դարերից եկած այս զվարճանքի միջոցառումը՝ նրան զրկելով իր հիմնական իմաստից: Իրականում, այս նոր հավատքը արմատապես դեմ էր մարմնի պաշտամունքին և ժողովրդի մեջ մեծ համբավ ունեցող հեթանոսական տոներին: 5-րդ դարի հայ եկեղեցու առաջնորդ Հովհան Մանդակունին թատրոնը, գուսանական արվեստը և ժողովրդական տոնակատարությունները համարում էր անհարիր: Այս հակադրումը բացատրվում էր նրանով, որ թատրոնները միշտ լի էին մարդկանց բազմությամբ, իսկ եկեղեցիները՝ դատարկ: Նույն ժամանակաշրջանի մեկ այլ կղերական մտածող Հովհաննես Ոսկեբերանը

[4] Պարսկական փոխառություն՝ «նավա» – նոր, «սարդ» – տարի, այսինքն՝ Նոր տարի:
[5] Ալաշկերտի մոտ՝ Արևմտյան Հայաստանում, Արածանի գետի աջ ափին:
[6] Պարսկական փոխառություն՝ «ասպ» – ձի, «րեզ» – բազմաբնույթ մարզական դաշտ, նշանակում է «մարզադաշտ (մրցումների), ձիարշավարան»: Ասպարեզներն ունեին 160-ից 230 մետր երկարություն:

équitation, fronde. Les danses, notamment montagnardes et d'initiations guerrières, qui faisaient l'objet d'une attention particulière lors des festivités, demandaient aussi une importante préparation physique. Il est également curieux de noter que les compétitions sportives ont toujours été accompagnées par des concours parallèles de chant, de poésie, d'acrobatie sur une corde raide, *etc*.

La fête de *Navasard* a été bien enracinée dans les traditions du peuple arménien. La diffusion et l'ancrage du christianisme sur le sol arménien n'a pas réussi à déraciner cette manifestation ludique séculaire et à la priver de son essence. De fait, cette nouvelle foi se prononçait farouchement contre le culte du corps et des fêtes païennes particulièrement appréciées par le peuple. Le chef de l'église arménienne du 5^e^ siècle Hovhan Mandakouni considérait le théâtre, l'art des *goussans* (troubadours) et les manifestations populaires comme un libertinage. Cette opposition reposait sur le fait que les théâtres étaient toujours pleins, tandis que les églises étaient vides. Un autre idéologue religieux de l'époque, Hovhannès Voskeberan, traitait ces festivités comme une « affaire diabolique » et proclamait que le peuple devait prendre ses distances par rapport aux jeux populaires, aux exercices physiques, aux compétitions, à la lutte et aux jeux de combats.

Vu son incapacité à supprimer et à faire oublier ces fêtes, l'église les a remplacées par les fêtes religieuses : la Bénédiction de l'eau – la fête du baptême de Jésus, le *Trndez* – la célébration du 40^e^ jour de la naissance du Christ, le *Tsarkazard* – le Dimanche des Rameaux ou Pâques fleuries ; la Pâques – dédiée au Christ, l'Ascension – dédiée aux derniers jours de la vie du Christ, *Vardavar* – fête de la Transfiguration. Mais la tradition de faire suivre les cérémonies religieuses par des concours sportifs, par des jeux et des danses a perduré jusqu'à nos jours. À ce propos, l'écrivain et le chef de l'église arménienne du XII siècle Nerses Chnorhali a été contraint d'autoriser les festivités populaires avec différentes manifestations et spectacles mondains et sportifs, donc la démonstration de la beauté physique du corps. Ceux-ci, néanmoins, n'intervenaient qu'après l'exécution des cérémonies et chants religieux.

Chez les Arméniens, les *Jeux de Navasard* sont les analogues des Jeux olympiques grecs, à la seule différence qu'ils étaient annuels. Après l'interdiction en 394 par Théodose I des Jeux grecs, ils ont été abandonnés et ont disparu en tant que phénomène socioculturel. Les *Jeux de Navasard* ont réussi à perdurer jusqu'à la fin du 19^e^ siècle en tant que fête sportive nationale tout en subissant quelques modifications de forme et de contenu. Comme écrit Yves Vargas, « *Tout ce qui existe, existe par hasard et perdure par nécessité* ».

Ainsi, les *Jeux de Navasard* poursuivaient des objectifs éducatifs et patriotiques et comportaient l'idée de rassemblement et d'union nationale. De nos jours, ces Jeux ont été remplacés par les *Jeux Pan-arméniens* qui gardent toujours cette idée d'union en rassemblant des Arméniens de la diaspora au sein de la mère-patrie. Les premiers Jeux ont eu lieu en août 1999 et incluaient sept disciplines sportives : l'athlétisme, le basket-ball, le tennis de table, les échecs, le volley-ball, le football. Plus tard la natation, le minifootball et le badminton ont également été intégrés dans le programme officiel. Ils se tiennent une fois tous les deux ans. Comme dans le passé, les participants représentent des villes et non des pays. La torche des Jeux pan-arméniens s'allume dans le temple païen du Soleil de Garni : un autre hommage rendu aux traditions et coutumes ancestrales qui remontent à la période païenne des *Jeux de Navasard*.

Garik Galstyan

այս տոնական զվարճություններին վերաբերվում էր որպես սատանայական գործի և հորդորում էր, որ ժողովուրդը իրեն զերծ պահի ժողովրդական խաղերին, ֆիզիկական վարժություններին, մրցումներին, ըմբշամարտին և մարտական խաղերին մասնակցելուց:

Տեսնելով այս տոները վերացնելու և մոռացության մատնելու իր անզորությունը՝ եկեղեցին դրանք ուղղակի փոխարինեց կրոնական տոներով. Ջրօրհնեքը՝ Քրիստոսի մկրտության տոնով, Տյառընդառաջը՝ Հիսուսի ծննդյան օրից հետո քառասուն օրվա նշումով, Ծաղկազարդը՝ Քրիստոսի Երուսաղեմ գալու, իսկ Զատիկը՝ Քրիստոսի անվան հետ կապելով, Համբարձումը՝ Հիսուսի կյանքի վերջին օրերին նվիրելով, Վարդավառը՝ Պայծառակերպության տոնով: Սակայն այն ավանդույթը, ըստ որի կրոնական ծիսակատարություններից հետո տեղի էին ունենում մարզական մրցաշարեր, խաղեր և պարեր, պահպանվեց մինչև մեր օրերը: Այս առիթով 12-րդ դարի գրող և հայոց եկեղեցու առաջնորդ Ներսես Շնորհալին ստիպված էր թույլատրել մարզական և աշխարհիկ բազմաբնույթ միջոցառումներով և ներկայացումներով հարուստ ժողովրդական տոնակատարությունները, այսինքն՝ մարմնի ֆիզիկական գեղեցկության ցուցադրումը: Այդ միջոցառումները, սակայն, պետք է տեղի ունենային միայն կրոնական ծիսակատարություններից և երգերից հետո:

Հայերիս համար Նավասարդյան խաղերը նույնն էին, ինչ օլիմպիական խաղերը՝ հույների կյանքում, մի տարբերությամբ միայն, որ Նավասարդյան խաղերն ամենամյա էին: 394 թ. Թեոդոս Ա կայսեր հրամանով Հունական խաղերի արգելելուց հետո, օլիմպիական խաղերը մատնվեցին մոռացության և վերացան որպես սոցիալ-մշակութային երևույթ: Նավասարդյան խաղերը որպես ազգային մարզական տոն, գոյատևեցին մինչև 19-րդ դարի վերջը, իհարկե, կրելով որոշ փոփոխություններ բովանդակության և ձևաչափի առումով: Ինչպես գրում է Իվ Վարգասը՝ «Այն, ինչ կա, գոյություն ունի պատահականորեն, սակայն հարատևում է, եթե զգացվում է նրա պահանջարկը»:

Այսպիսով, Նավասարդյան խաղերը հետապնդում էին դաստիարակչական և հայրենասիրական նպատակներ՝ ունենալով ազգային համախմբման և միասնության գաղափար: Մեր օրերում, նրանք փոխարինվել են Համահայկական խաղերով, որոնք հետապնդում են նույն գաղափարը՝ համախմբելով սփյուռքի հայերին մայր-հայրենիքի հողի վրա: Առաջին Համահայկական խաղերը տեղի ունեցան 1999 թ. օգոստոսին և ներառում էին յոթ մարզաձև՝ թեթև ատլետիկա, բասկետբոլ, սեղանի թենիս, ճատրակ, վոլեյբոլ, ֆուտբոլ: Ավելի ուշ լողը, մինի-ֆուտբոլը և բադմինթոնը նույնպես իրենց տեղը գտան պաշտոնական ծրագրի մեջ: Խաղերն անց են կացվում երկու տարին մեկ անգամ: Ինչպես անցյալում, մասնակիցները ներկայացնում են քաղաքներ և ոչ թե երկրներ: Համահայկական խաղերի ջահը վառվում է Գառնու հեթանոսական Արևի տաճարում: Սա մեկ այլ տուրք է դարերից եկած ավանդույթներին և սովորույթներին, որոնք տանում են մինչև Նավասարդյան Խաղերի հեթանոսական ժամանակաշրջանը:

Գարիկ Գալստյան

Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ, ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆՔ ԳԱԼԻՍ, ՈՒ՞Ր ԵՆՔ ԳՆՈՒՄ

Պատմահայր Մովսես Խորենացուց (V դար) եկող այս հարցերը հուզում են նաև մյուս ազգերի ներկայացուցիչներին: Դրանում ես համոզվեցի Լիլի պատկերասրահի մեծ դահլիճում կայացած ասուլիս-կոնֆերանսի ժամանակ, որին հրավիրված էին Ֆրանսիայում ապրող տարբեր ազգերի ներկայացուցիչներ՝ աֆրոֆրանսիացիներ, լատինաամերիկյան երկրներից արտագաղթածներ, հայեր և, իհարկե, ֆրանսիացիներ: Մարդու իրավունքների շաբաթվա շրջանակներում «Հանդիպում բոլորի հետ» խորագրով երեկոն կազմակերպել էր «Մենք սլամել ենք լուսնի վրա» միությունը: Մտքերի փոխանակման համար այս ասոցիացիան համախմբել էր 2006 թ. լիցեյների Գոնկուրի մրցանակի դափնեկիր գրող Լեոնորա Միանոյին, դերասան և տեքստերի հեղինակ Նաթալի Քուալիին, դերասան, երգահան, երգիչ և «Ակտիվ արվարձաններ» միության նախագահ Ռոստին, և կինոգործիչ Սերժ Ավետիքյանին:

QUI SOMMES NOUS, D'OÙ VENONS NOUS, OÙ ALLONS NOUS ?

Ces questions sur lesquelles s'interrogeait le « père de l'hstoire arménienne » Moïse de Khoren (V^{e} siècle) concernent également les représentants d'autres peuples. J'ai eu cette certitude lors de la conférence-débat qui s'est déroulée dans l'amphithéâtre du Palais des Beaux-arts de Lille. S'y étaient réunis les représentants de différents peuples qui vivent en France : des Africains, des Antillais, des Latino-américains, des Arméniens et bien sûr des Français de souche. Cette manifestation a été organisée par l'association *Nous avons slamé sur la lune*. Dans le cadre de la semaine des droits de l'homme à Lille, cette association a réuni Léonora Miano, écrivain, lauréate du prix Goncourt des lycéens en 2006, Nathaly Coualy, comédienne et auteur, Rost, chanteur et président de l'association *Banlieues actives*, et le réalisateur Serge Avédikian pour un débat au cours d'une soirée intitulée « Rencontre du Tout Monde ».

Le sujet principal concernait les questions fondamentales qui touchent les représentants des peuples immigrants : la perte de leur patrie d'origine, la préservation de l'identité initiale des nouveaux arrivants parallèlement à leur intégration dans un pays développé d'Europe occidentale comme la France et autres.

Le film documentaire, choisi pour illustrer le débat dans cette salle vraiment « multicolore », a profondément interpellé ceux qui s'intéressent à ces problèmes. Il s'agissait du film du cinéaste franco-arménien Serge Avédikian *Nous avons bu la même eau* qui a été accueilli avec un grand intérêt. Il a été réalisé sur deux décennies, grâce à un travail laborieux fondé sur un passé douloureux.

Il est inutile de présenter Serge Avédikian tant il est connu des spectateurs arméniens comme des autres amateurs de cinéma. Il est réalisateur, acteur ou scénariste d'une cinquantaine de films. Il a également participé à plusieurs festivals internationaux et à remporté des prix pour ses œuvres. L'histoire de son film présenté à cette soirée est unique et authentique. Elle était très personnelle : Soloz, le village pittoresque de ses ancêtres, près de Bursa, qui est aujourd'hui exclusivement peuplé de Turcs et porte le nom de Yeni (Nouveau) Soloz. Son travail a démarré en 1987 et s'est échelonné sur plusieurs années à l'occasion de voyages qui ont eu la même destination.

Serge Avédikian, Hayk Gambarian et Garik Galstyan après la rencontre
Սերժ Ավետիքյանը, Հ. Ղամբարյանը և Գ. Գալստյանը՝ հանդիպումից հետո

Des riantes côtes de la mer de Marmara on passe à Bursa puis à Soloz, en profitant des odeurs des bois d'oliviers. J'étais très ému en regardant le film. Dix ans après le premier voyage de l'auteur, comme un pèlerin, j'ai aussi pris le même chemin. Quand j'é-

Գլխավոր թեման Ֆրանսիա ներգաղթած այլազգիներին հուզող հիմնարար խնդիրների մասին էր. կորսյալ հայրենիք, նորեկների ազգային ինքնության պահպանում՝ զուգահեռաբար Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրներից մեկում նրանց ինտեգրման պրոցեսին:

Rost (2^{e} à gauche, Léonora Miano et Serge Avédikan lors des débats
Ռոստը (ձախից 2-րդը), Լ. Միանոն և Ս. Ավետիքյանը՝ քննարկումների ժամանակ

Հիրավի «խայտաբղետ» դահլիճի դատին ներկայացվեց վավերագրական մի շարժանկարը, որն ընտրված թեմայի խնդիրներով հետաքրքրվողներին ու դրա հետ առնչվողներին բազմաբնույթ հարցադրումներ պիտի աներ: Խոսքը ֆրանսահայ կինոգործիչ Սերժ Ավետիքյանի «Մենք նույն ջուրն ենք խմել» ժապավենի մասին էր, որը ստեղծվել էր մոտ քսան տարվա քրտնաջան աշխատանքի ու ցավոտ անցյալի շնորհիվ:

Սերժ Ավետիքյանին ներկայացնելն ավելորդ ջանք կլիներ, քանզի նա քաջ հայտնի է հայ (և ոչ միայն) հանդիսատեսին: Մոտ հինգ տասնյակ կինոնկարների բեմադրիչ, դերասան կամ սցենարների հենքի ստեղծող, միջազգային փառատոների մասնակից, մրցանակակիր: Իսկ ներկայացրած ժապավենի պատմությունն ինքնատիպ ու առանձնակի է: Նկարահանումներն իրականացվել էին մի քանի տարվա ընդմիջումով, դեպի նույն վայրը կատարած ուղևորությունների ժամանակ՝ սկսած 1987 թ.: Իսկ հասցեն նվիրական է՝ հեղինակի նախնյաց ծննդավայրը՝ Բուրսայի մոտ գտնվող Սոլոզ չքնաղատես գյուղը, որն այժմ բացառապես թուրքաբնակ է և կրում է Ենի (Նոր) Սոլոզ անունը:

Ծիծաղախիտ Մարմարայի ափերով պիտի հասնես Բուրսա, ապա Սոլոզ՝ վայելելով ձիթենյաց անտառների բույրը: Ժապավենը դիտելիս ես շատ հուզվեցի, քանի որ հեղինակի առաջին այցելությունից ուղիղ տաս տարի անց, ուխտավորի պես, ես էլ եմ կտրել նույն ճամփան: Երբ ես երիտասարդ էի, իմ մի տարեց բարեկամ շատ էր հիշում-պատմում իր ծննդավայր քաղաք Բուրսայի մասին: Նա տեսել, վերապրել էր Եղեռնը, անցել էր Դեր Զորի դժոխքով, իսկ երբ որբուկներ հավաքողները հարցրել էին նրա ազգանունը, չէր հիշել և գրել էր տվել հոր անունով՝ Առաքել Գասպարի Գասպարյան: Թեև պատանի հասակին, իր բախտակիցների հետ մինչև 1921 թ. պաշտպանել էր եզակի կանգուն մնացած հայ գյուղերը և եղեռնի նոր ալիքից հալածվող ազգակիցներին: Ապա տարագրություն՝ Բուլղարիա, Հունաստան, Ֆրանսիա: Ազգասեր երիտասարդը, ՀՕԿ-ի ակտիվ գործիչը, հոգով միշտ հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հետ էր: Ահա թե ինչու նա հանգրվանեց Հայաստանում՝ շուտով հայտնվելով ստալինյան բանտերում: Երկու տարի ապրելով նրա սարսափները՝ նա հրաշքով փրկվեց սիբիրյան տաժանակրությունից:

Չնայած տարիքի մեծ տարբերությանը, մեր բարեկամությունը խորացավ: Կյանքի վերջին տարիներին նա առավել ծարավի էր իր ծննդավայրի կորուստով: Իր բաղձանքն էր, որպեսզի մահից հետո իր գերեզմանին ցանած Բուրսայի մի բուռ հողը ամոքեր հոգու անանց կարոտը:

tais jeune, un de mes amis âgés m'a beaucoup parlé de sa ville natale Bursa. Il a vu le génocide, y a survécu et a traversé l'enfer de Der Zor. Jeune orphelin, il n'a pu donner le nom de sa famille aux autorités de l'orphelinat, il n'a su donner que le prénom de son père Gaspar. Accolé à son propre prénom, il est devenu Arakel Gaspari Gasparian. Malgré son âge, avec ceux qui ont partagé son sort, il a continué à défendre les restes des villages arméniens et ses compatriotes des autres vagues du génocide jusqu'en 1921. Après ce fut l'émigration par la Bulgarie, la Grèce et la France. Étant membre actif du *Comité de secours arménien*, son cœur restait attaché à sa patrie devenue l'Arménie Soviétique. Ainsi, il a regagné ce pays pour être aussitôt emprisonné dans les geôles staliniennes. Après deux ans d'horreur, il a évité par miracle l'exil sibérien.

Malgré notre grande différence d'âge, notre amitié s'est soudée. Les dernières années de sa vie, il est devenu particulièrement nostalgique de sa ville natale. Son désir était qu'après sa mort une poignée de terre de Bursa soit versée sur sa tombe pour combler la soif de son âme.

Il y a plusieurs années, au cours de mon travail de journaliste, je suis allé à K.Polis (Istanbul). Pour une journée, je me suis rendu à Bursa avec difficulté afin de trouver le cimetière arménien pour y prendre de la terre sacrée. Toutes mes tentatives, ainsi que celles du jeune qui m'accompagnait, pour trouver ce lieu de repos ultime des Arméniens ont échoué. Les habitants ne savaient même pas que des Arméniens avaient vécu ici. Comment alors montrer le cimetière ! Enfin, je me suis rapproché d'une vielle dame pour poser la même question. Elle a répondu par une autre question : « Les Arméniens sont-ils chrétiens ou musulmans ? » Elle connaissait un lieu, elle m'a montré un chemin au bout duquel nous avons trouvé un cimetière catholique des années 1920. La plupart des tombes étaient françaises. Que faire ? J'ai pris cette terre-là pour la verser sur la tombe de mon ami.

Pourquoi faire ce long parallèle ? Dans son film Serge Avédikian cherche aussi les tombes de ses ancêtres. Il trouve des pierres tombales arméniennes dont les habitants du village ont fait des marches. Combien de fois ces vestiges de notre mémoire ont été piétinés ? Et les nouveaux maîtres des lieux disent que « Nous avons bu la même eau »…

L'auteur a une approche très intéressante : il propose les faits sans donner d'analyse, sans condamner, sans imposer son opinion. Il laisse le verdict au spectateur : comment apprécier justement la situation et comment juger ? Mais est-ce que tous se souviennent de l'histoire et la comprennent ? Ici, le jeune turc nous apporte son aide en disant : « On nous a appris autre chose ». C'est la réussite de Serge Avédikian de faire une approche qu'on peut saluer même si certains ne sont pas d'accord avec elle. Et aussi comment les minorités vivant dans un pays étranger peuvent-elles, malgré l'intégration, ne pas conserver leur identité ethnique, leurs particularités d'origine ? Même l'Arménien qui vit dans sa mèrepatrie a une nostalgie et une tristesse envers son véritable berceau devenu étranger.

Des écrivains et autres artistes, des jeunes et moins jeunes, ont participé au débat. Les thèmes abordés portaient sur les racines ethniques des immigrants suite au génocide ou autres circonstances de migration, sur la reconnaissance et la conservation de l'identité ethnique, sur l'adaptation au nouvel environnement, sur la nécessité historique de la contribution apportée à l'économie du pays d'accueil, à sa puissance, à sa science et à sa culture.

Les propos du politologue Garik Galstyan, enseignant à l'Université de Lille3, méritent d'être mentionnés. Il a souligné que le débat ouvert sur l'identité nationale est un faux débat. L'identité est individuelle et culturelle. Elle est étroitement liée à l'appartenance ethnique de chacun d'entre nous. Selon lui, il serait

Տարիներ անց լրագրողական աշխատանքիս բերումով մեկնեցի Կ. Պոլիս: Մեկ օրով դժվարությամբ գնացի Բուրսա և փնտրեցի հայոց գերեզմանատունը, որ հենց այդտեղից վերցնեմ սրբազան հողը: Իմ և ուղեկցող երիտասարդի բոլոր փորձերը՝ գտնել հայոց հանգստատունը, ապարդյուն անցան: Մարդիկ չգիտեին, որ այստեղ ապրել են հայեր, ուր մնաց թե ցույց տային գերեզմանոցը: Վերջապես ես մոտեցա պատկառելի հասակի մի կնոջ ու նույն հարցով դիմեցի, իսկ նա պատասխանեց հարցով՝ «Հայերը քրիստոնյա՞ են, թե՞ մահմեդական»: Նա էլ, իբրև գիտակ, ինձ մի ճանապարհ ցույց տվեց: Երբ հասանք, տեսանք անցյալ դարի 20-ական թվականների կաթոլիկ գերեզմանատուն, մեծ մասամբ ֆրանսիացիների տապանաքարերով: Ինչ արած, այստեղից վերցրած հողը տարա և ընկերոջս գերեզմանին ցանեցի:

Թերևս երկար թվացող այս զուգահեռն ինչու՞ անցկացրի: Սերժ Ավետիքյանի ֆիլմում էլ իր նախնյաց գերեզմանները փնտրող հեղինակը գտնում է հայկական տապանաքարեր, որոնցով ներկայիս բնակիչները շարել են երկրորդ հարկ բարձրացող աստիճանները, որի ամեն մի սանդղակը մի գերեզմանաքար է: Հիշատակի այդ մասունքները ոտնակոխ են արվում քանի՛-քանի՛ անգամ, իսկ տանտերերն ասում են. «Մենք նույն ջուրն ենք խմել…»:

Հետաքրքիր մոտեցում ունի հեղինակը. առաջադրում է փաստը՝ առանց մեկնաբանության, առանց մեղադրական եզրակացության, առանց իր կարծիքը պարտադրելու: Նա վճիռը թողնում է հանդիսատեսին՝ ինչպես գնահատել, արդար լուծում տալ երևույթին: Բայց, արդյո՞ք, բոլորն են հիշում, հասկանում պատմությունը: Այստեղ էլ օգնության է գալիս թուրք երիտասարդը՝ «Մեզ ուրիշ բան են սովորեցրել»: Եվ սա Սերժ Ավետիքյանի հաջողությունն է, ողջունելի մոտեցումը խնդրին, թեպետ ոմանք համամիտ չեն: Նաև ինչպես կարող են օտար երկրում ապրող փոքրամասնությունները, թեպետ ինտեգրվելով, չպահպանել իրենց ազգային ինքնությունը, ազգային նկարագիրը: Անգամ իսկ մայր հայրենիքում ապրող հայն էլ կարոտ ու բաղձանք ունի առ իր իսկական, բայց օտարացած ծննդավայրը:

Քննարկման ընթացքում ելույթ ունեցան գրողներ և դերասաններ, երիտասարդներ, միջին և ավագ տարիքի քաղաքացիներ: Նրանք խոսեցին եղեռնի կամ այլ հանգամանքների բերումով ներգաղթածների ազգային արմատների, ազգային ինքնությունը ճանաչելու և պահպանելու, նոր միջավայրին հարմարվելու, ընդունող երկրի տնտեսությանը, հզորությանը, գիտությանն ու մշակույթին ավանդ բերելու պատմական անհրաժեշտության մասին:

Ուշագրավ էր քաղաքագետ, Լիլ3 համալսարանի դասախոս Գարիկ Գալստյանի կարճառոտ ելույթը: Նա նշեց, որ ազգային ինքնության շուրջ բացված քննարկումները շինծու են: Ինքնությունը անհատական է և ազգայնական: Նա սերտորեն կապված է յուրաքանչյուրիս ազգային պատկանելության հետ: Նրա կարծիքով ավելի նախընտրելի կլիներ, որպեսզի մտքերի փոխանակումը կատարվեր մարդկանց քաղաքացիական զգացումի դրսևորման և կատարելագործման հարցերի շուրջ:

Ներկաները ջերմորեն ընդունեցին ֆիլմի հեղինակ, ճանաչված բեմադրիչ և դերասան Սերժ Ավետիքյանին, ով ներկայացրեց կինոնկարի ստեղծման պատմությունը, նրա առաջացրած հետաքրքրությունը, շոշափած գաղափարների համամարդկային նշանակությունը: Նա նաև պատասխանեց հանդիսատեսների բազմաթիվ հարցերին:

Մանվել Մարգարյան

préférable que les échanges d'idées se fassent autour des questions de la manifestation du sentiment de citoyenneté des hommes et de son développement.

Les spectateurs ont chaleureusement accueilli l'auteur du film Serge Avedikian, célèbre metteur en scène et acteur, qui a présenté l'histoire de la création de son œuvre, l'intérêt qu'elle a suscité, la signification universelle des idées traitées. Il a également répondu aux nombreuses questions des spectateurs.

Manvel Margaryan

UN DÉBAT TRÈS ACTUEL AUTOUR DES QUESTIONS D'IDENTITÉ, DE NATIONALITÉ ET DE FRONTIÈRE

Au cours de cette soirée du 17 décembre 2009 où le film de Serge Avédikian nous a été présenté, un texte de Léonora Miano sur l'esclavage a été slamé, ainsi qu'une adaptation du livre d'Edouard Glissant et Patrick Chamoiseau *Quand les murs tombent, l'identité nationale hors la loi*.

Au moment où le gouvernement français a lancé son débat sur la définition de l'identité nationale, ce débat a pris une dimension très profonde et universelle. Chaque participant a apporté la richesse de son expérience sur le thème. Rost a rappelé que « *nous sommes tous de passage sur cette terre, locataire d'elle. Si l'on respecte les règles de vie en communauté, on est partout chez soi* ». Il pense que le film d'Avédikian pose la question de savoir comment un peuple fait face aux tabous de son histoire. Les personnes prennent les choses pour elles-mêmes et souvent n'ont pas la force d'affronter ces tabous lorsqu'elles ont tant d'autres difficultés à surmonter.

De gauche à droite : Rost, L. Miano, S. Avédikan et N. Coualy lors des débats
Ձախից՝ աջ. Ռոստը, Լ. Միանոն, Ս. Ավետիքյանը և Ն. Քուալին բանավիճում են

Serge Avédikian évoque une pathologie du bourreau et de la victime. Selon lui, certaines personnes de la communauté arménienne finissent par n'exister que par le génocide. Il cherche à démontrer que l'on peut exister au-delà de cette identité. Il a constaté que beaucoup de Turcs vivent dans l'ignorance parce qu'ils vivent dans un État négationniste. Or un État, contrairement à sa population, n'a pas la capacité de franchir la frontière et de faire tomber les murs. Il a constaté que les Turcs désirent fortement parler de leur passé, même si c'est douloureux, tabou et interdit.

Le slam, comme les textes, les films, les pièces de théâtre sont des pépites pour engager le dialogue entre les populations. La Turquie est composée de plus de 120 peuples, et partout le sang est mêlé. L'idée d'État-nation a été pensée par des politiques guidés par des sentiments d'orgueil et de fierté nationaux : « Heureux qui se dit Turc » dit la légende sous un monument de Soloz. La population actuelle de Soloz vient de Bulgarie et de Grèce, cela a influencé la manière dont Serge Avédikian a été acceuilli.

Madame Miano a fait le choix d'une identité « frontalière », elle vient d'un pays où plus de 250 langues sont parlées, une langue commune en est issue, mélange de toutes les autres. Il y a un moment où il faut savoir solder l'histoire, sans l'oublier pour autant, pour passer à autre chose, à l'avenir. Beaucoup de personnes dans les quartiers populaires ne se sentent pas françaises. L'intégration doit-elle passer par l'assimilation ? Une pétition circule sur le Net pour refuser le débat sur l'identité nationale car on ne peut confondre l'identité d'un individu, dont chacun est porteur et qui est issue d'un mélange d'influences qui lui sont propres, et la nation qui est une notion politique. C'est une pauvreté

ԱՐԴԻԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ, ԱԶԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

2009 թ. դեկտեմբերի 17-ի երեկոյի ընթացքում Սերժ Ավետիքյանի ֆիլմի հետ մեկտեղ կարդացվեցին Լեոնորա Միանոյի՝ ստրկությանը նվիրված տեքստերից մեկը, ինչպես նաև հատվածներ Էդուարդ Գլիսսանի և Պատրիկ Շամուազոյի «Երբ պատերն ընկնում են. ազգային ինքնությունն օրենքից դուրս» գրքից:

Ազգային ինքնության սահմանման մասին Ֆրանսիայի կառավարության կողմից առաջարկված մտքերի փոխանակությունն ունեցավ շատ խոր և համընդհանուր արձագանք: Յուրաքանչյուր մասնակից ներկաներին փոխանցեց այս թեմայի շուրջ ունեցած իր հարուստ փորձը: Ռոստը հիշեցրեց, որ «մենք բոլորս ժամանակավորապես ենք գտնվում երկրագնդի վրա, մենք նրա վարձակալն ենք: Եթե հարգվում են համայնքային կյանքի օրենքները, ապա մենք ամենուր մեր տանն ենք»: Նա կարծում է, որ Ավետիքյանի ֆիլմը հարցադրում է, թե ինչպե՞ս է մի ամբողջ ազգ դիմագրավում իր պատմության տաբուներին: Մարդիկ, ավելի շուտ հակված լինելով լուծելու իրենց անձնական խնդիրները, շատ անգամ ուժ չեն ունենում պայքարելու այս արգելքների դեմ, քանի որ շատ ուրիշ դժվարություններ հաղթահարելու կարիք ունեն:

Սերժ Ավետիքյանը խոսեց դահիճի և զոհի բարդույթի մասին: Ըստ նրա, հայ համայնքի որոշ ներկայացուցիչներ ապրում են միայն եղեռնի հուշերով: Ավետիքյանը ջանում էր ցույց տալ, որ կարելի է գոյատևել այդ ինքնությունից դուրս: Նա ընդգծեց, որ շատ թուրքեր ապրում են չիմացության մեջ, քանի որ նրանք ապրում են ժխտողական պետությունում: Սակայն պետությունը, ի տարբերություն նրա բնակչության, չունի սահմանը անցնելու ունակությունը, որը հանգեցնում է պատերի անկմանը: Նա նաև ավելացրեց, որ թուրքերն էլ ծարավ են խոսելու իրենց անցյալի մասին, որքան էլ այն լինի ցավալի, լռության մատնված ու արգելված:

Սլամը, ինչպես բոլոր տեքստերը, ֆիլմերը և թատերական պիեսները, մի միջոց է, որը հնարավորություն է տալիս երկխոսություն սկսել ժողովուրդների միջև: Թուրքիայում ապրում է մոտ 120 ժողովուրդ, և ամենուրեք մարդկային արյունը խառնըված է: Ազգային պետություն ստեղծելու գաղափարը եկել է քաղաքական գործիչներից, ովքեր առաջնորդվում էին ազգային հպարտության և վեհանձնության զգացումով: «Լինել հպարտ, նշանակում է լինել թուրք». այս երկտողը գրված էր Սոլոզում կանգնեցված մի հուշարձանի վրա: Սոլոզի այսօրվա բնակչությունը եկել է Բուլղարիայից և Հունաստանից, մի հանգամանք, որ իր ազդեցությունն է ունեցել Սերժ Ավետիքյանին ընդունելու գործում:

Տիկին Միանոն շեշտադրումը կատարեց «սահմանային» ինքնության վրա: Նա ծագումով մի երկրից է, որտեղ մարդիկ խոսում են մոտ 250 լեզուներով, որոնց միաձուլումից առաջացել է մի ընդհանուր լեզու: Գալիս է մի պահ, երբ հարկավոր է պատմությունը դնել մի կողմ: Երբեք այն չմոռանալով, հարկավոր է մտածել մեկ ուրիշ բանի՝ ապագայի մասին: Շատերը ծայրամասային թաղամասերում իրենց չեն զգում ֆրանսիացիներ: Արդյոք պե՞տք է, որ ինտեգրացումը անցնի միաձուլվելու ճանապարհով: Համացանցով կազմակերպվել է ստորագրահավաք, որպեսզի մերժվի ազգային ինքնության մասին այս բանավեճը, քանզի չի կարելի խառնել անհատի ինքնության հետ, որ յուրաքանչյուրս ունի իր մեջ, և որը մեր տարաքին բնորոշ ազդեցությունների խառնուրդի ծնունդ է: Ազգի ինքնությունը քաղաքական կատեգորիա է: Ինքնությունը վերածել ազգային ինքնության՝ դա խղճուկ մի գաղափար է: Մենք բոլորս տարբեր ենք, և սա է մեր հարստությունը:

Ռոստը մեջբերեց մի ասացվածք. «Եթե դու չգիտես թե ու՞ր ես գնում, ապա իմացի՛ր, թե որտեղի՞ց ես գալիս և այսպես que de

réduire l'identité à la nation. Nous sommes tous multiples et c'est une richesse.

Rost cite un proverbe qui dit : « Si tu ne sais pas où tu vas, sache d'où tu viens et tu pourras avancer ». Il a décidé d'être Français parce que cela lui plaît, même s'il n'a pas la nationalité française

Serge Avédikian précise que son film a été traduit en turc et diffusé à Istanbul. Aucune personne de Soloz ne s'est déplacée. Leur crainte est encore trop forte. L'idée d'un musée arménien à Soloz n'a pas non plus abouti pour l'instant malgré son soutien. La solution pour faire avancer la situation est l'expérience et l'éducation, ce qui est de la responsabilité de tous.

Louisette Lamarche

NAVASART NOUS CHARME À NOUVEAU

Un groupe de membres de la communauté arménienne de Lille a assisté à la soirée solennelle dédiée à l'anniversaire de la *Croix Bleue* d'Issy-les-Moulineaux grâce aux efforts de l'association *Ararat*.

L'histoire du *Secours arménien*, vieux de 90 ans, est riche de nombreuses actions de conservation de l'arménité. En France, il est représenté notamment par l'*Association arménienne de la Croix Bleue* qui a des délégations dans presque chaque ville de France où une communauté arménienne est implantée.

« Nous sommes toujours là où les nostalgiques ont besoin de notre aide et de notre soutien »,– a dit dans son discours Madame Jacqueline Minassian, la Présidente de la section de la Croix Bleue d'Issy-les-Moulineaux. « Nos dames et demoiselles sont impliquées dans de nombreux programmes sociaux, culturels et d'éducation. Partout leur dévouement au maintien de l'identité arménienne est hautement apprécié par la communauté locale. Nous bénéficions de la confiance de tous, notre travail est considéré. Ainsi, pendant des décennies, nos Arméniennes ont porté sur leurs minces épaules cette mission de sauvegarde de l'identité ».

Le groupe d'Arméniens de Lille après le spectacle de *Navasart* Լիլահայերի խումբը՝ «Նավասարդ»ի ներկայացումից հետո

À l'occasion de cet anniversaire de la Croix Bleue, le Maire d'Issy-les-Moulineaux, citoyen d'honneur de la ville d'Etchmiadzine, grand ami du peuple arménien, a fait un discours chaleureux. Connaisseur éclairé de l'histoire arménienne, il a séjourné de nombreuses fois en Arménie. Il a une grande sympathie à l'égard de la communauté arménienne d'Issy-les-Moulineaux et la soutient dans la réalisation de différents programmes.

դու կարող ես առաջ շարժվել»: Չունենալով նույնիսկ ֆրանսիական քաղաքացիություն՝ Ռոստը որոշել է լինել ֆրանսիացի, որովհետև դա նրան դուր է գալիս:

Սերժ Ավետիքյանը տեղեկացրեց, որ իր ֆիլմը թարգմանվել է թուրքերեն և ցուցադրվել Ստամբուլում: Սոլոզից ոչ ոք չէր եկել: Վախը դեռ նստած է նրանց մեջ: Սոլոզում հայկական թանգարան ստեղծելու գաղափարն առայժմ նույնպես մնացել է օդում կախված՝ չնայած հեղինակի առաջարկած օգնությանը: Իրավիճակը փոխելու և առաջ գնալու միակ ուղին տարիների փորձվածությունն է և դաստիարակությունը: Այս ամենի պատասխանատվությունը մենք բոլորս պետք է կրենք:

Լուիզեթ Լամարշ

«ՆԱՎԱՍԱՐԴ»Ը ԿՐԿԻՆ ԳԵՐՈՒՄ Է

Լիլահայ համայնքի մի խումբ անդամներ «Արարատ» միության ջանքերով մասնակից եղան Իսսի-լե-Մուլինո քաղաքի «Կապույտ խաչ»-ի հիմնադրման տարեդարձին նվիրված հանդիսավոր երեկոյին:

Հայ օգնության միության 90-ամյա տարեգրությունը հարուստ է հայրենանվեր բազմաթիվ էջերով: Ֆրանսիայում այս կազմակերպությունը կոչվում է «Կապույտ Խաչի Հայկական միություն», որն իր մասնաճյուղերն ունի երկրի գրեթե բոլոր հայաբնակ քաղաքներում:

Une des danses flamboyantes de *Navasart* et la danse de petits bergers
«Նավասարդ»ի կրակոտ պարերից մեկը և փոքրիկ հովիվների պարը

«Մենք մշտապես այնտեղ ենք, ուր կարոտյալներն զգում են մեր օգնության, սատար լինելու կարիքը»,– իր ելույթում ասաց Իսսի-լե-Մուլինոյի մասնաճյուղի ատենապետուհի Ժաքլին Մինասյանը: «Մեր տիկնայք և օրիորդները ընդգրկված են սոցիալական, մշակութային, կրթական, ներդրումների և այլ բազմաթիվ հայանպաստ ծրագրերում և ամենուր իրենց անշահախնդիր գործունեությամբ վայելում են համայնքի և շրջապատի սերն ու ճանաչումը: Մեզ վստահում են, հավատում, գնահատում, և այսպես տասնամյակներ շարունակ մեր հայուհիներն իրենց փոխր ուսերին տանում են այս ազգօգուտ առաքելությունը»:

«Կապույտ Խաչ»ի հոբելյանի առթիվ իր ջերմ շնորհավորանքը հայտնեց Իսսի-լե-Մուլինոյի քաղաքապետ, Էջմիածնի պատվավոր քաղաքացի և հայ ժողովրդի մեծ բարեկամ Անդրե Սանտինին: Նա քաջածանոթ է հայոց պատմությանը, բազմիցս եղել է Հայաստանում, ակնածանք է տածում Իսսի-լե-Մուլինոյի հայ համայնքի նկատմամբ և սատարում է նրանց բազմապիսի ծրագրերի իրականացման գործում:

Երեկոյի «աղանդերը» «Նավասարդ» անսամբլի ելույթն էր: 800 հոգանոց լեփ-լեցուն դահլիճը համույթի յուրաքանչյուր բեմելից

En compagnie de J. Minassian, Présidente de la Croix Bleue d’Issy-les-Moulineaux
Իսսի-լե-Մուլինոյի «Կապույտ Խաչ»ի ատենապետուհի Ժ. Մինասյանի հետ

L’événement de cette soirée fut le spectacle de *Navasart*. La salle de 800 personnes était comble. Après chaque danse, de vifs applaudissements fusaient. Par le biais de figures gracieuses de danse, du raffinement de la chorégraphie, de la musique et des chants, cet ensemble quadragénaire mais toujours jeune, représente la culture, les traditions et les coutumes arméniennes, ainsi que les fragments de l’histoire du peuple arménien. Les quelques soixante danseurs et musiciens de *Navasart* ont représenté la culture arménienne dans plus d’une dizaine de pays du monde : on les a applaudis au Palais Royal de Londres, au Carnegie Hall de New York, à l’Olympia de Paris et, bien évidemment, en Arménie et au Haut-Karabakh.

L’école de danse de *Navasart* fonctionne depuis 2002. Elle accueille de jeunes Arméniens de 7 à 17 ans. Ce sont eux qui assureront la relève de la troupe dans les années à venir.

Louciné, Hayk et Jacqueline lors de la route de retour
Լուսինեն, Հայկը և Ժաքլինը՝ տունդարձի ճանապարհին

Les Arméniens de Lille se sont séparés de leurs compatriotes d’Issy-les-Moulineaux dans la joie, gardant dans leur cœur le plaisir esthétique de cette soirée qui s’est prolongé deux heures durant dans le bus, lors du retour. Comme contaminés par ce spectacle de *Navasart*, la danse arménienne s’est propagée dans l’étroit couloir du bus. Chargés de bonne humeur, les Arméniens de Lille dansaient et chantaient en oubliant tout. Ainsi, ils se sont approprié le spectacle de *Navasart*, c’était leur entrée sur scène, dont ils se souviendront encore longtemps.

Jaqueline Kasparian

հետո թնդում էր բուռն ծափահարություններից: Քառասունամյա, բայց միշտ երիտասարդ այս խումբը պարային ճկուն շարժումներով, բարձրաճաշակ խորեոգրաֆիայով, երաժշտության ու երգարվեստի լեզվով ներկայացնում է հայկական մշակույթը, հայ ժողովրդի պատմության դրվագները, հայկական ավանդույթներն ու սովորությունները: «Նավասարդ»ի շուրջ վաթսուն պարողներն ու երաժիշտները հայկական մշակույթը ներկայացրել են աշխարհի տասնյակ երկրներում: Նրանց ծափահարել են Լոնդոնի Թագավորական պալատում, Նյու Յորքի «Կարնեգի Հոլլ»ում, Փարիզի «Օլիմպիայում» և, իհարկե, նաև Հայաստանում ու Արցախում:

Comme contaminés par ce spectacle de *Navasart*, la danse arménienne s’est propagée dans l’étroit couloir du bus

Ասես վարակված «Նավասարդ»ի ելույթից՝ ավտոբուսի նեղլիկ միջանցքում թևածեց հայկական պարը

2002 թ. ի վեր գործում է «Նավասարդ»ի պարային դպրոցը, ուր ընդգրկված են յոթից՝ տասնյոթ տարեկան հայորդիներ: Առաջիկա տարիներին նրանք էլ կպապահովեն համույթի սերնդափոխությունը:

Լիլահայերը մեծ բավականություն ստացած հրաժեշտ տվեցին Իսսի-լե-Մուլինոյի մեր հայրենակիցներին, իրենց հոգում պահելով երեկոյի գեղագիտական հաճույքը: Այդ բավականությունը երկարաձգվեց ևս երկու ժամ՝ ավտոբուսով տունդարձի ճանապարհին: Ասես վարակված «Նավասարդ»ի ելույթից՝ ավտոբուսի նեղլիկ միջանցքում թևածեց հայկական պարը: Բարձր տրամադրությամբ համակված լիլահայերն ինքնամոռաց պարում ու երգում էին:Սա էլ, ասես, նրանց «Նավասարդ»ի ելույթն էր, բեմել, որը երկար կմնա մեր հիշողության մեջ:

Ժակլին Կասպարյան

CHARLES AZNAVOUR EN DÉDICACES AU FURET DU NORD DE LILLE

Mardi 8 décembre 2009 après-midi, Charles Aznavour, 85 ans, le plus grand artiste du 20e siècle selon un sondage américain, a donné une séance de dédicaces au Furet du Nord. Il a récemment publié un livre intitulé *À voix basse* où il y dévoile ses confidences d'homme et d'artiste. Il y parle de son passé, du présent et bien sûr de l'avenir. Les fans, dont plusieurs Arméniens de Lille (Anna, Kristina, Karen, Siranouche, Garik et beaucoup de jeunes) pour qui il s'agissait d'une belle occasion de rencontre informelle, étaient nombreux. Cette séance, qui a duré plusieurs heures, a connu un afflux de visiteurs constant. Voici ci-dessous l'article de Susanna Mughnetsyan qui nous transmet ses pensées à propos de ce grand artiste, compositeur, parolier, comédien et, bien évidemment, Arménien.

Anna, Madeleine, Siranouche et, bien évidemment, Charles Aznavour
Աննան, Մադլենը, Սիրանուշը և, իհարկե, Շառլ Ազնավուրը

UNE DÉCLARATION DE TOUT CŒUR

Le monde de l'art est un océan sans fond, sans bornes avec toutes ses manifestations, mais je pense que l'art de chanter est le plus répandu et touche chacun d'entre nous. Il y a un grand nombre de personnalités aimées et connues dans ce domaine, mais le temps fait son œuvre et, avec lui, l'étoile des célébrités s'éteint et celles-ci sont oubliées. Peu d'entre elles, forgées dans un métal noble et inaltérable, restent au sommet et brillent avec la même chaleur, avec la même lumière claire et agréable. Les vraies chansons et mélodies qui touchent le cœur n'ont pas de nationalité, de langue, ni de confession. On s'incline, sans aucun doute, devant les vraies valeurs qui constituent une richesse universelle.

La première fois que j'ai écouté Charles Aznavour, j'étais encore très jeune. Chaque vibration de sa voix mélodieuse a coulé dans mes veines, a atteint mon cœur et ne l'a jamais quitté… Son chant unique était tellement intime et à l'unisson avec mon cœur et mes sentiments que d'emblée je suis entièrement tombée sous son charme envoûtant. Je suis ainsi devenue une admiratrice passionnée et une fan incontestable. C'était ma première déclaration d'amour, un amour qui, avec le temps, n'a pas été avalé comme le pain cuit de la première fournée, mais a grandi, pris de la force et s'est ancré profondément en moi. Il est toujours resté à mes côtés lors des moments les plus importants de ma vie, partageant mes

ԸՆԾԱՅԱԳԻՐ՝ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻՑ «ՖՅՈՒՐԵ ԴՅՈՒ ՆՈՐ» ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

2009 թ. դեկտեմբերի 8-ին՝ երեքշաբթի օրը, 85-ամյա Շառլ Ազնավուրը՝ ըստ ամերիկյան հարցման, 20-րդ դարի ամենամեծ Արտիստը, «Ֆյուրե դյու Նոր» գրախանութում օրվա երկրորդ կեսին անցկացրեց ընծայագրի սեանս: Վերջերս հրատարակվել է նրա գիրքը՝ «Ցածր ձայնով» խորագրի տակ, որի մեջ տեղ են գտել Ազնավուր մարդու և արտիստի խոստովանությունները: Նա պատմում է իր անցյալի, ներկայի և, իհարկե, ապագայի մասին: Երկրպագուները բազմաթիվ էին, որոնց թվում կային նաև լիլահայեր՝ Աննան, Քրիստինան, Կարենը, Սիրանուշը, Գարիկը, բազմաթիվ պատանիներ, որոնց համար սա հիանալի առիթ էր անմիջական հանդիպման համար:

Սեանսը տևեց մի քանի ժամ, որի ընթացքում մարդկային հոսքն այդպես էլ չդադարեց: Ստորև ներկայացնում ենք Սուսաննա Մուղնեցյանի հոդվածը, որն արտահայտում է նրա մտքերը՝ նվիրված այս մեծ արտիստին, երգահանին, տեքստերի հեղինակին, դերասանին և, իհարկե, հային:

Le disque dédicacé par Charles Aznavour pour la famille Zakarian
Զաքարյանների ընտանիքի համար Շառլ Ազնավուրի ձայնասկավառակի վրա թողած ընծայագիրը

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

Արվեստի աշխարհը անհատակ ու անեզր մի օվկիանոս է իր բոլոր դրսևորումներով, բայց կարծում եմ, որ երգարվեստը շատ ավելի հանրային է ու հոգեհունչ: Բազում սիրելի ու հանրահայտ գործիչներ կան այս բնագավառում, բայց ժամանակն իր գործն է անում, և կարկառուն դեմքերը տարիների ընթացքում խամրում ու մոռացվում են: Միայն քչերն են՝ թրծված ազնիվ ու չժանգոտվող մետաղից, որ մնում են երկնակամարում և ցոլցոլում նույն պայծառ ու թովիչ լույսով ու ջերմությամբ: Իսկական, սրտաբուխ երգն ու մեղեդին չունեն ազգություն, լեզու ու դավանանք: Ճշմարիտ արժեքների առջև ծնկի ես գալիս անվերապահորեն. դրանք համամարդկային հարստություն են:

Ես առաջին անգամ նրան ունկնդրեցի դեռևս վաղ պատանեկությանս տարիներին, ու նրա ձայնի յուրաքանչյուր թրթռուն ելևէջն ու հևքը ներհոսեցին երակներովս, հասան սրտիս ու մինչև այսօր բնակվում են այնտեղ… Նրա անզուգական երգը ելևէջում էր իմ սրտին ու զգացմունքներին այնպե՜ս համահունչ ու մտերմիկ, որ միանգամից անվերադարձ ու անմնացորդ տրվեցի

tristesses comme mes joies, devenant un ami complice et fidèle. Maintenant encore je prononce avec beaucoup d'émotions son nom :

– Charles Aznavour... le chanteur mondialement connu qui, en dépit de son âge avancé, est toujours sur scène et surprend le monde par son art de chanter, par ses succès permanents, par son énergie inépuisable et par son dynamisme.

– Charles Aznavour... Un individu unique en son genre, poète, meilleur réflecteur des sentiments humains, chanteur dont la voix se distingue des autres par son timbre particulier et dont les chansons ne peuvent être méconnues. Une personne douée d'une nature exceptionnelle, possédant une vocation suprême d'Artiste né.

– Charles Aznavour... Un homme simple, ordinaire, qui réunit en lui les meilleures qualités et valeurs aussi bien françaises qu'arméniennes. Un homme qui monte sur scène avec son large sourire à la française, son charme non dissimulé, ses gestes expressifs... et ses tristes yeux d'Arménien…

On peut s'étonner que dans le cas d'Aznavour l'appartenance nationale n'ait aucune importance (certes, je suis très contente que nous ayons les mêmes origines arméniennes. Ce fait me remplit de fierté : l'art des Grands est universel.

Aznavour est aimé de tous, il est le roi couronné de la chanson française. Mais, bien évidemment, il existe aussi un côté purement humain du Grand Artiste dans lequel, à la grande joie des Arméniens, est soulignée son arménité. Il a été un des premiers qui, après la catastrophe terrible du séisme de 1988, a immédiatement tendu la main à son peuple sinistré non seulement matériellement, mais également moralement : il est devenu le baume de l'âme de sa nation désespérée. C'est lui qui est devenu le « l'amplificateur d'alerte » qui a mobilisé le monde entier. La mélodie de la chanson émouvante dédiée aux victimes du séisme s'est diffusée dans le monde pour soutenir l'Arménie et la reconstruire. À ce propos notons que son initiatives, qui auparavant n'avaient pas eu d'équivalent, perdurent encore. Enfin, n'oublions pas non plus ses œuvres et programmes de bienfaisance qui fonctionnent toujours en Arménie.

J'ai seulement essayé d'ébaucher une partie de son image. Je ne sais pas dans quelle mesure j'ai réussi à le faire mais je suis certaine que nombreux sont ceux, notamment les personnes de ma génération, qui partagent mon opinion et mon amour sans limites envers Charles Aznavour, ce grand Homme et Arménien. Je connais beaucoup de personnes pour qui Aznavour est une idole vénérée. Il n'est jamais devenu mon fétiche, je n'aime pas les idoles et je ne les accepte pas parce qu'elles sont immortelles, dominantes et froides. Aznavour est mon complice, mon ami de cœur. J'ai vécu ma vie avec les mélodies de ses chansons. Avec *Un enfant est né* j'ai aimé et j'ai été désenchantée, j'ai partagé sa douleur et j'ai souffert. J'ai également valsé avec *La Bohême* en réévaluant mes pertes et mes acquis, et je n'ai jamais cessé depuis de procéder ainsi tout en étant charmée par sa musique vitale.

J'ai toujours été surprise par le poids du don divin de cet Homme de petite taille qui, jusqu'à maintenant, rend fou et fait tonner les salles sous les applaudissements des spectateurs levés. Que soit bénie ton existence mystérieuse et ta chanson « porte-bonheur » sur notre Terre comme le messager itinérant de l'amour et de la paix…

Susanna Mughnetsyan



À VOIX BASSE
AZNAVOUR, CHARLES
[Biographie]
Éditeur : DON QUICHOTTE
Date de parution : 19/10/09
Nombre de pages : 225
ISBN : 9782359490015 (235949001X)

նրա կախարդական հմայքին՝ դառնալով նրա խենթ սիրահարն ու մոլի երկրպագուն: Սա իմ առաջին սիրո խոստովանությունն էր, ս՛էր, որ ժամանակի հետ առաջին թխած հացի պես «կուտ» չգնաց, այլ աճեց, զորացավ ու փառավորվեց իմ էության մեջ, միշտ եղավ իմ կողքին կյանքիս բոլոր կարևոր պահերին՝ ինձ հետ կիսելով թե՛ տխրությունս, թե՛ ուրախությունս՝ լինելով աջակից ու անդավաճան ընկեր: Ես այսօր էլ առավել քան երկյուղածությամբ եմ արտասանում նրա անունը.

- Շառլ Ազնավուր... Աշխարհահռչակ «շանսոնիե», ով, չնայած պատկառելի տարիքին, դեռևս բեմում է և ապշեցնում է աշխարհին իր երգարվեստի աննահանջ առաջընթացով, անսպառ էներգիայով ու դինամիկայով:

- Շառլ Ազնավուր... Անկրկնելի անհատականություն, մարդկային զգացմունքների լավագույն թարգմանիչ-բանաստեղծ, բոլորից տարբերակվող ձայնային յուրահատուկ հնչերանգով երգիչ, որի հնչեցրած երգը չճանաչելն անհավանական է: Ի վերուստ շնորհյալ անձ՝ ի սկզբանե ծնյալ Արտիստ բարձրագույն կոչումով:

- Շառլ Ազնավուր... Պարզ, հասարակ մի մարդ, որն իր մեջ ամփոփում է թե՛ ֆրանսիացու, թե՛ հայի լավագույն գծերն ու արժեքները: Մարդ, որ բեմ է բարձրանում ֆրանսիական լայն ժպիտով, անթաքույց հմայքով ու արտիստիկ ժեստերով ու... նայում հայի թախծոտ աչքերով...

Զարմանալի է, բայց Ազնավուրի դեպքում ինձ համար ոչ մի նշանակություն չունի նրա ազգային պատկանելիությունը (իհա՛րկե, ես շատ ուրախ եմ, որ նա իմ ազգակիցն է, նրա հայ լինելու հանգամանքը մինչև վերջ լցնում է իմ հպարտության բաժակը). նման Մեծերի արվեստը համամարդկային է:

Ազնավուրը ֆրանսիական «շանսոն»ի թագադրված արքան է, բոլորի սիրելին: Բայց ... այո՛, կա նաև Մեծն Արտիստի զուտ մարդկային նկարագիրը, որտեղ, ի ուրախություն մեզ՝ հայերիս, ընդգծված է նրա հայ լինելու գործոնը: Ազնավուրն այն առաջիններից էր, որն ահավոր աղետի՝ 1988 թ. երկրաշարժի ժամանակ անմիջապես ձեռք մեկնեց իր աղետյալ ժողովրդին ոչ միայն նյութապես, այլ նաև հոգու բալասան դարձավ իր հուսահատ ազգին: Հենց նա դարձավ ահազանգ հնչեցնող այն խոսափողը, որ ոտքի հանեց համայն մարդկությանը: Երկրաշարժի զոհերին նվիրված նրա սրտահույզ երգի ելևէջները տարածվեցին աշխարհով մեկ՝ ի բարօրություն և աջակցություն Հայաստան աշխարհի: Ի դեպ փաստեմ, որ նրա՝ մինչ այդ իր նախադեպը չունեցող գործն առ այսօր էլ շարունակվում է: Չմոռանանք նաև նշել նրա Հայաստանում գործող բարեգործական ծրագրերի ու նախաձեռնումների մասին:

Ես ընդամենը մասամբ փորձեցի ամբողջացնել նրա կերպարը: Չգիտեմ՝ որքանով հաջողվեց, բայց համոզված եմ, որ շատերը և հատկապես իմ սերնդակիցները կիսում են իմ կարծիքն ու անսահման սերը Մեծ մարդու ու Հայի՝ Շառլ Ազնավուր անհատի նկատմամբ: Ճանաչում եմ շատերին, որոնց համար նա կուռք է դարձել: Նա երբևէ իմ պաշտամունքը չդարձավ. չեմ սիրում և ընդունում կուռքերին, որոնք անմահ են, իշխող ու սառը: Ազնավուրն իմ ընկերն է, իմ հոգու ընկերը, ես նրա երգի հնչյունների տակ եմ իմ կյանքն ապրել, նրա «Մի մանուկ»ի հետ սիրել ու հիասթափվել, ցավս կիսել ու տառապել, իսկ հետո «Բոհեմ»ի հետ շրջապտույտ կատարել՝ վերագնահատելով կորուստներս ու ձեռքբերումներս, ու այդպես կրկին ու կրկին՝ նրա կենարար երգին տրված ու հմայված...

Ինձ միշտ ապշեցնում է այդ փոքրամարմին Մարդու աստվածատուր շնորհի կշիռը, որ մինչ այսօր խենթացնում ու հոտընկայս ծափողջույններով դահլիճներ է որոտացնում: Թող հավիտյանս օրհնյալ լինի քո առեղծվածային գոյությունն ու բարեբեր երգը մեր մոլորակի վրա՝ որպես սիրո ու խաղաղության ճախրող մունետիկ...

Սուսաննա Մուղնեցյան

LA FÊTE DU NOUVEL AN, UN BILAN DE L'ANNÉE ÉCOULÉE

Nous avons enfin quitté la première décade du nouveau millénaire, et cela donne à ce nouvel an une dimension particulière et encourageante. Voilà pourquoi le joli spectacle de fin d'année de l'école d'arménien du samedi de notre communauté arménienne de Lille s'est déroulé dans une grande joie.

La salle de cours commune était bien décorée. Les parents heureux et les invités attendaient avec impatience…

Tu vois, mon fils, où que tu sois,
Où que tu ailles sous cette lune,
Même si ta mère sort de ton esprit,
N'oublie jamais ta langue maternelle.

Les enfants de l'école arménienne avec leurs quatre professeurs
Հայկական դպրոցի երեխաները իրենց չորս ուսուցիչների հետ

Le spectacle, qui laissera un souvenir mémorable aux participants, a commencé sous des ovations enthousiastes. Les poèmes patriotiques ont retenti dans l'air et la partie du spectacle consacrée aux questions-réponses a commencé de manière inattendue. Les questions de la pédagogue chevronnée Susanna Mughnetsyan portaient sur l'histoire, la religion et la culture arméniennes, mais aussi sur la littérature, l'art et même sur la vie de la diaspora arménienne ou encore sur des problèmes de conservation de l'arménité. J'avoue que même les adultes ne connaissaient peut-être pas la réponse à certaines questions tandis que les enfants y répondaient brièvement d'une manière sûre et exhaustive. C'était le fruit du travail soigné et appliqué des dévoués Tikin Susanna, Siranouche Babikian et Haïk Gambarian qui ont véritablement la vocation d'enseigner, et dont le travail est très apprécié des parents.

Nous sommes ensuite revenus au spectacle avec le récit inspiré d'une petite fille « Je vous donne autant de feu que j'ai dans mon cœur ». Les enfants ont dansé avec beaucoup de grâce et chanté avec ferveur. Il est très curieux de voir qu'avec un seul jour de cours par semaine, on puisse réunir autant de connaissances et de sens de l'esthétique. On ne peut nier ici la contribution du professeur de danse Lusine Ghazaryan. Pour finir, le père Noël a distribué aux enfants talentueux des sachets de friandises. À la surprise des parents, les enfants ont à leur tour proposé leurs cadeaux irremplaçables : des sapins de Noël crées et décorés par les mains des petits. Les lettres de l'alphabet arménien et des extraits de prières chrétiennes décorés selon le style des miniaturistes arméniens médiévaux étaient fixés sur les branches argentées des sapins et des ceps.

Notons que les meilleurs moments de ce spectacle ont également été présentés après la messe de Noël arménienne qui a été célébrée à l'église Saint-Sauveur de Lille. Le père de la cathédrale

ԱՄԱՆՈՐԻ ՏՈՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՑՆՈՂ ՏԱՐՎԱ ՋԵԿՈՒՅՑ

Ի վերջո մտանք նոր հազարամյակի 10-րդ կլոր տարին, և այս ամանորը, կամա թե ակամա, ավելի հանդիսավոր ու ոգևորիչ էր: Ահա թե ինչու Լիլի մեր համայնքի շաբաթօրյա հայկական դպրոցի տարեմուտի ճոխ ցերեկույթն անցավ մեծ խանդավառությամբ:

Ընդհանուր դասասրահը զարդարանքի մեջ է, երջանիկ ծնողներն ու հյուրերը անհամբեր սպասում են...

Ու տես, որդիս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանաս:

Բուռն ծափահարություններով սկսվում է ցերեկույթը, որը տևական հաճույք պատճառեց ներկաներին: Հնչում են հայրենասիրական բանաստեղծություններ, և անսպասելիորեն սկսվում է հարց ու պատասխանի բաժինը: Հմուտ մանկավարժ Սուսաննա Մուղնեցյանի հարցերը վերաբերում էին հայոց պատմությանը, կրոնին ու մշակույթին, գրականությանն ու արվեստին, անգամ սփյուռքահայ կյանքին, ազգապահպանման խնդիրներին: Խոստովանեմ, որ դրանց մի մասի պատասխաններն անգամ մեծերս չէինք կարող տալ, իսկ երեխաները խոսում էին հակիրճ, բայց վստահ, բազմակողմանի ու սպառիչ: Դա ուսուցչական առաքելությունը ստանձնած նվիրյալներ տիկին Սուսաննայի, Սիրանուշ Բաբիկյանի և Հայկ Ղամբարյանի քրտնաջան ու հոգատար աշխատանքի արդյունքն է, որից անչափ գոհ են ծնողները:

Ապա շարունակվեց գեղարվեստական մասը: Պստիկ աղջնակը «Ինչքան որ հուր կա իմ սրտում, բոլորը ձեզ» բանաստեղծությունը ներշնչանքով արտասանում է, ի՜նչ նազանքով են պարում երեխաները, ի՜նչ ոգևորությամբ են երգում: Զարմանալի բան, շաբաթական մեկ օր և այսքան գիտելիքների հետ այսպիսի գեղագիտական դաստիարակություն: Այստեղ անուրանալի է պարուսույց Լուսինե Ղազարյանի վաստակը: Ավարտին Կաղանդ պապիկը շնորհալի երեխաներին բաժանեց անուշահամ քաղցրավենիքների տոպրակներ, իսկ նրանք պատասխանեցին անփոխարինելի նվերներով. Այստեղ կազմակերպված էր փոքրիկների ձեռքերով պատրաստված ամանորյա զարդարանքների ճոխ տոնավաճառ, որը զարմացրեց ծնողներին: Եղևնու և որթատունկի արծաթափայլ ճյուղերին հայոց այբուբենի տառերն էին, քրիստոնեական աղոթքներից հատվածներ՝ զարդարված միջնադարյան հայ մանրանկարչության ոճով:

Les enfants lors du cours de danse arménienne avec Lusine
Երեխաները հայկական պարի դասընթացի ժամանակ՝ Լուսինեի հետ

Ի դեպ, ցերեկույթի լավագույն հատվածները կրկնվեցին Սուրբ Ծննդյան տոնին նվիրված հայկական պատարագից հետո, որը մատուցվեց Լիլի Սուրբ Փրկիչ եկեղեցում: Փարիզից հրավիրվել էին Սուրբ Հովհաննես-Մկրտիչ մայր եկեղեցու հոգևոր հովիվ Տ.Ավետիս Ա.Քահանա Բալեկյանը և երգեհոնահար-երգչուհի Անահիտ Դուզյանը:

Հոգևոր հովիվը կոչ արեց հայությանը աճող սերնդին կապել եկեղեցու հետ, քանզի դարեր ի վեր եկեղեցին է զորավիգ եղել ազգի գոյատևմանը և այսօր, օտար ափերում, նպաստում է ազգապահպանման վեհ գործին:

Մանվել Մարգարյան

centrale Saint Jean-Baptiste de Paris Ter Avétis Balekian et la chanteuse et organiste Anahit Duzyan ont été invités de Paris à cette occasion.

Les lettres arméniennes suspendues sur les branches argentées des sapins…
Եղևնու արծաթափայլ ճյուղերին հայոց այբուբենի տառերն էին...

Le prêtre a incité les parents arméniens à conserver un lien entre leurs enfants et l'église, car pendant des siècles, l'église s'est impliquée dans la conservation de l'identité arménienne. Elle contribue aujourd'hui encore, sur les rives étrangères, à poursuivre ce travail appréciable.

Manvel Margaryan

LA MESSE DE NOËL À L'ÉGLISE SAINTSAUVEUR DE LILLE

Et voilà encore un Noël… Encore et de nouveau mais chaque fois avec des émotions et attentes différentes, avec une nouvelle interprétation…

Au fil du temps tout change : les intérêts comme la conception du monde. Mais le Nouvel An s'annonce toujours avec des attentes et des désirs élevés. Le Noël et le Nouvel An sont fêtés par toute l'humanité avec le même enthousiasme et la même confiance en l'avenir radieux. Il est incontestable que les Arméniens sont parmi les grands fidèles de ces fêtes et les célèbrent « à l'arménienne », à leur image : d'une manière impétueuse, enivrée, fastueuse et solennelle. Ces fêtes durent longtemps et sont pleinement célébrées. Le Nouvel An et le Noël se succèdent l'un à l'autre. Il est vrai que chez certains peuples leur célébration est inversée, mais le résultat est le même... Nous, les Arméniens, nous en profitons tout simplement pour célébrer ces fêtes agréables deux, parfois même trois fois mais dans un ordre différent. Et pourquoi pas ? « Il vaut mieux plus que moins », c'est notre proverbe.

Une fois encore, les infatigables représentants de l'association arménienne de Lille ont réussi à organiser convenablement la fête de Noël. Une messe arménienne a été célébrée à l'église Saint-Sauveur de Lille consacrée à la naissance sacrée de Jésus.

Cette fois-ci ce n'était pas le père Haroutyoun que nous connaissons bien et dont la célébration des messes et la parole touchante nous ont souvent émerveillées, qui est venu de Paris. C'était un nouveau père spirituel, le père Avetis Balékian, qui a préparé la messe. Il l'a fait avec beaucoup de savoir-faire et de conviction : nous sommes toujours prudents voire soupçonneux à l'égard de toute chose nouvelle… Mais en très peu de temps, le père a su nous montrer les points forts de sa personnalité : il a vite organisé et réuni les accessoires nécessaires et les personnes indispensables pour le déroulement de la cérémonie. Il a promptement choisi sa petite équipe parmi les jeunes. Après s'être changés, les

Les enfants démontrent les objets faits par eux-mêmes
Երեխաները ցուցադրում են իրենց ձեռքի աշխատանքները

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ ԼԻԼԻ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ահա կրկին մի նոր Ամանոր... կրկին ու կրկին, բայց ամեն անգամ մի նոր թրթիռով, նոր ակնկալիքով ու նորովի մեկնաբանությամբ...

Տարիների հետ փոխվում է ամեն ինչ՝ թե՛ մեր հետաքրքրությունները, թե՛ աշխարհայացքը, բայց Ամանորը միշտ գալիս է թևավոր իղձերով ու սպասումներով: Սուրբ Ծննդյան ու Ամանորյա տոները ողջ մարդկությունը նշում է նույն չմարող խանդավառությամբ ու պայծառ գալիքի հավատով: Ինչ խոսք, մենք՝ հայերս, այդ տոների մեծագույն ջատագովներն ենք ու այն նշում ենք զուտ հայավարի. ասել է թե մեր հայկական նկարագրին համապատասխան՝ ավելի բուռն, ավելի գինովցած, ավելի շքեղ ու ճոխ, երկարատև ու անմնացորդ: Ամանորն ու Սուրբ Ծնունդը միմյանց շարունակությունն են, իհարկե, ոմանց մոտ այլ հերթականությամբ, բայց արդյունքում էլի նույնը ու կրկին նույնը: Ուղղակի մենք՝ հայերս, առիթից օգտվում ու երկու, երբեմն էլ երեք անգամ ենք նշում այս հաճելի տոները, բայց տարբեր հերթականությամբ: Իսկ ինչու՞ ոչ. «շատ լինի, քիչ չլինի» խոսքը մերն է ու մերը:

Այս անգամ էլ լիլահայ համայնքի անխոնջ ներկայացուցիչներին հաջողվեց Սուրբ Ծննդյան տոնը ըստ պատշաճի կազմակերպել: Լիլի Սուրբ Փրկիչ եկեղեցում հայկական պատարագ մատուցվեց Հիսուսի Սուրբ Ծննդյան աշխարհազոր ավետիսով:

Ter Avetis avec ses « diacres » lors de la messe de Noël
Տեր Ավետիսը սարկավագների հետ պատարագի ժամանակ

Vue générale et arrière de l’église Saint-Sauveur de Lille
Լիլ քաղաքի Սուրբ Փրկիչ եկեղեցու արտաքին տեսքը

jeunes sont entrés dans le rôle des acteurs de la cérémonie comme le feraient les diacres. Le prêtre poursuivait un seul but : rendre la messe plus impressionnante et lui donner plus de réel. Le père Avetis est venu de Paris avec la chanteuse Anahit Duzyan : nous la connaissons bien et ce n’est pas la première fois qu’elle nous captive avec son art de chanter unique en son genre.

Cette année, nous avons découvert une nouvelle église de style néo-byzantin, oriental et, par conséquent, plus proche des origines de notre culture. Cette maison de Dieu était pour nous une découverte agréable et surprenante. Son style architectural et son atmosphère sacrée étaient très proches de nos âmes. L’église avait parfaitement été choisie pour célébrer notre communion avec Dieu.

Donnons la brève histoire du passé de ce lieu saint. Une église gothique s’y dressait il y a bien longtemps, depuis le 14e siècle. Elle a été ravagée par un incendie en 1896. Plus tard, une nouvelle église de style néo-byzantin suivant un plan reproduisant la croix latine y a été construite. Celle-ci a ouvert ses portes en 1902. On raconte que c’est dans cette église qu’au Moyen-Âge, avant de partir en Orient pour se battre au nom de leur foi, les chevaliers recevaient la bénédiction avant les batailles. Il en était de même pour les marchands et les pèlerins avant de prendre la route menant vers les pays orientaux. C’est pourquoi ce temple de Dieu était également connu sous le nom symbolique de « Portes d’Orient » de Lille. Cette belle bâtisse, située en plein cœur de Lille, n’a pas son analogue dans la région.

Revenons néanmoins au déroulement de notre messe. Avec son approche esthétique et intelligente le prêtre officiant a répandu dans les cœurs des personnes présentes le sens et le contenu du mystère de la journée en glorifiant leurs âmes par la bonne nouvelle de la naissance du Sauveur. Avec une grande verve, avec un dévouement et un amour suprêmes. Il a bien mené la cérémonie religieuse, conformément à notre foi. Tout cela a été couronné par les magnifiques chants de la chanteuse et organiste Anahit Duzyan. Seule la chaleur des cœurs emplissait l’église en panne de chauffage. Il semblait que tous étaient déchargés de leurs problèmes et soucis quotidiens et savouraient le calme divin de cette journée bénie. J’étais particulièrement intéressée par le jeune Arménien de Lille qui remplissait les fonctions d’encenseur-auxiliaire du prêtre : chacun de ses pas reflétait une telle piété qu’on avait l’impression qu’il avait trouvé sa vraie vocation.

Le père Avetis a également célébré la deuxième cérémonie de la journée : la Bénédiction de l’eau. Tous ont communié avec le Seigneur avec l’hostie et en buvant l’eau bénite. Une petite surprise attendait les personnes présentes : dans le chœur de l’église les enfants arméniens ont montré leur connaissance de la langue maternelle. Ils ont récité des poèmes dans un arménien pur, beau et vibrant en immortalisant une fois de plus les œuvres uniques des grands poètes arméniens dans ce lieu saint. Le prêtre

Պատարագիչ քահանան մեզ հանրածանոթ տեր Հարությունը չէր, որի մատուցած պատարագներով ու սրտամոտ խոսքի հմայքով հաճախ ենք հիացել: Փարիզից ժամանել էր մի նոր հոգևոր հովիվ՝ տեր Ավետիս քահանա Բալեկյանը, ով մատուցեց ցանկալի պատարագը: Նա իր գործի մեջ հմուտ էր ու փորձառու. մենք միշտ ամեն ինչի նորին մոտենում ենք զգուշորեն ու նաև... մի քիչ կասկածամտորեն... Տեր հայրը մի ակնթարթում դրսևորեց իր անձի լավագույն հատկանիշները. անմիջապես կազմակերպեց և ի մի բերեց արարողակարգին անհրաժեշտ բեմական թե՛ մարդկային դեմքերը, թե՛ առարկայական իրերը: Արագ կողմնորոշվելով՝ նա երիտասարդներից ընտրեց փոքրիկ թիմ, զգեստավորեց նրանց ու դարձրեց ծիսակատարության դերակատարներ՝ որպես սպասարկու սարկավագներ: Եվ այդ ամենը լոկ պատարագն ավելի տպավորիչ ու իրական դարձնելու մղումով: Տեր Ավետիսի հետ Փարիզից ժամանել էր մեզ արդեն քաջածանոթ երգչուհի Անահիտ Դուզյանը, ով առաջին անգամը չէ, որ մեզ գերել է իր անզուգական երգարվեստով:

Այս տարի մեզ հյուրընկալեց մեկ այլ եկեղեցի՝ կառուցված արևելյան նեո-բյուզանդական ոճով, որը, բնականաբար, ավելի մոտ է մեր հավատի ակունքներին: Աստծո այս տունը մեզ համար շատ հաճելի ու անակնկալ հայտնագործում էր, որն իր ոճավորման ու հոգեհմայման մթնոլորտով անչափ հոգեհարազատ էր մեզ, և հենց ինքը՝ եկեղեցին իսկ վկայում էր, որ մեր հաղորդությունը Աստծո հետ ճիշտ ու ընտրյալ ժամադրավայր էր:

Մի համառոտ ակնարկ սույն սուրբ շեմի անցյալից: Այս վայրում ի սկզբանե՝ դեռևս հեռավոր XIV դարում, վեր է խոյացել գոթական մի եկեղեցի, որը հրո ճարակ է դարձել 1896 թ.: Հետագայում, նույն տեղում կառուցվել է լատինական խաչ հիշեցնող հատակագծով ներկայիս եկեղեցին՝ նեո-բյուզանդական ոճով, որը գործում է 1902 թ. ի վեր: Պատմում են, որ միջնադարում, երբ ասպետները մարտի էին գնում Արևելք, հանուն հավատի, հենց այստեղ էին օրհնություն ստանում ճակատամարտից առաջ: Նույնպես էին վարվում նաև վաճառականներն ու ուխտավորները՝ արևելյան երկրներ ճանապարհ ընկնելուց առաջ: Ահա թե ինչու Աստծո այս տաճարը հայտնի էր Լիլի «Արևելքի դարպասներ» խորհրդանշական անունով: Այս գեղեցիկ կառույցը, որը հենց Լիլի սրտում է տեղակայված, չունի իր նմանը տարածաշրջանում:

On avait l’impression que ce jeune Arménien de Lille, qui remplissait les fonctions d’encenseur-auxiliaire du prêtre, a trouvé sa vraie vocation…
Թվում էր, թե այս լիլահայ երիտասարդը, որը կատարում էր պատարագիչի օգնական-խնկարկիչի դերը, գտել էր իր իսկական կոչումը...

Ինչևէ, վերադառնանք մեր Սուրբ պատարագի գործընթացին: Պատարագիչ քահանան իր գեղեցիկ ու գիտակ մոտեցումով օրվա խորհրդի իմաստն ու ոգին ներարկեց ներկաների սրտերում ու փառավորեց նրանց հոգիները Փրկչի ծննդյան սուրբ ավետիսով: Նա ողջ արարողակարգը կատարեց տեղը-տեղին, մեր հավատի տառին ու բառին համապատասխան, մեծ ավյունով, գերագույն սի-

s'est adressé aux petits avec des mots d'encouragement tout en bénissant leur travail et conduite.

Les élèves récitent des poèmes
Մանուկները ոտանավորներ արտասանելիս

Ce jour-là les fidèles étaient nombreux dans l'église. Ce fait pourrait être considéré comme la plus grande réussite. Après la messe, les participants se félicitaient, s'embrassaient et échangeaient les plus importantes paroles de la journée se rapportant à la naissance du Sauveur. Puis, selon la tradition, les fidèles ont allumé des bougies. Chacun d'entre eux a partagé son désir le plus profond avec le Seigneur tout en rendant honneur à son existence éternelle.

Comme d'habitude, tout ceci s'est terminé par un goûter. Aucun Arménien ne se passe de plaisirs de la table et d'hospitalité. La journée était festive, tout respirait la gaieté. Il y avait longtemps que je n'avais pas vu autant d'Arméniens souriants. Chacun d'entre eux, avant de repartir et à sa manière, a rempli son cœur d'autant d'amour, d'espoir et de foi qu'il y avait de place. J'espère vivement que mes souhaits et la réalité seront à l'unisson et que mes respectueux compatriotes essayeront vraiment de garder dans leurs âmes la source spontanée de l'amour et de la foi.

Je terminerai en remerciant les organisateurs de cette manifestation (notamment Louisette, Garik et Haïk) et tous ceux qui n'ont pas ménagé leurs efforts pour contribuer à ces fêtes de l'âme. Pour cela, aidons-les en fonction de nos possibilités.

Susanna Mughnetsyan

րով ու նվիրումով: Եվ այդ ամենը պսակավորվեց երգեհոնահարերգչուհի Անահիտ Դուզյանի հրաշալի երգեցողությամբ: Մարդկանց սրտերի ջերմությունն էր արդեն տաքացնում չջեռուցվող եկեղեցին: Բոլորը կարծես լիցքաթափվել էին իրենց առօրյա հոգսերից ու խնդիրներից ու վայելում էին այդ օրհնյալ օրվա աստվածատուր անդորրը: Ինձ հատկապես հետաքրքրեց պատարագիչի խնկարկիչ-օգնական, ավագ սարկավագի դերը կատարող լիլահայ երիտասարդը, ով այնպես լավ էր մտել իր դերի մեջ և այնքան երկյուղածությամբ ու պարտավորվածությամբ էր անում իր յուրաքանչյուր քայլը, որ թվում էր, թե գտել է իր իսկական կոչումը:

Տեր Ավետիսը կատարեց նաև օրվա երկրորդ խորհրդի՝ Ջրօրհնեքի ծիսակարգը: Բոլորը տիրոջ հետ հաղորդվեցին նշխարով և ըմպեցին օրհնյալ ջրից: Ներկաներին սպասվում էր մի փոքրիկ անակնկալ. հենց եկեղեցու բեմահարթակում հայ մանուկները դրսևորեցին իրենց մայրենիի իմացությունը՝ գեղեցիկ, զուլալ ու հնչեղ հայերենով ներկայացնելով հայոց բանաստեղծները՝ մեկ անգամ ևս այս սրբավայրում անմահացնելով մեր մեծ բանաստեղծների անզուգական գործերը: Տեր հայրը իր գովեստի խոսքն ուղղեց երեխաներին՝ օրհնելով նրանց վարքն ու գործը:

Եկեղեցին այդ օրը բազմամարդ էր, և այդ հանգամանքը կարելի է համարել ամենամեծ ձեռքբերումը: Պատարագից հետո մասնակիցներն իրար շնորհավորում էին, համբուրվում և փոխանակում օրվա խորհրդի կարևոր խոսքերը՝ աշխարհի ամենաբարի և ամենափրկիչ ավետիսը: Հետո ըստ կարգի բոլորը զբաղվեցին մոմավառությամբ՝ յուրաքանչյուրը իր սրտի իղձը կիսելով Տիրոջ հետ, նաև փառավորելով նրա հավերժական լինելիության անժխտելի փաստը:

Ce jour-là les présents étaient nombreux au sein de l'église
Եկեղեցին այդ օրը բազմամարդ էր…

Ինչպես միշտ, վերջին ակորդը հյուրասիրությունն էր, ի՞նչ հայ՝ առանց սեղանի ու հյուրասիրության: Օրը տոնական էր, ու ամեն ինչ շնչում էր տոնականորեն: Ես վաղուց այդքան ժպտացող հայեր չէի տեսել. ամեն մեկը յուրովի իր սրտում ամբարել ու տուն էր տանում այնքան սեր, հույս ու հավատ, որքան տեղ ու անվերապահ ցանկություն ուներ: Հուսամ, որ ցանկություններս ու իրականությունը համահունչ են մեկմեկու, և մեր հարգարժան հայրենակիցները, իսկապես, իրենց հոգիներում կփորձեն պահպանել սիրո ու հավատի ինքնաբուխ ակունք-աղբյուրը:

Վերջում շնորհակալությունս հայտնեմ այս ամենի կազմակերպիչներին (հատկապես Լուիզեթին, Գարիկին, Հայկին) և աջակիցներին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում մեզ համար հոգու տոներ կազմակերպելիս: Եկեք փորձենք մեր քիչ թե շատ հնարավորությունների սահմաններում օգնել նրանց:

Սուսաննա Մուղնեցյան

Liste des membres de l'Association *Ararat* (2009/ 2010) à la date du 1er février 2010
«Արարատ» միության անդամների ցուցակը (2009/2010) 2010 թ. փետրվարի 1-ի դրությամբ

1. Adamyan	Varoujan et Gohar
2. Alagezov	Erik, Anna et Tamara
3. Allain	Louis et Annie
4. Arakelian	Vahram, Gagik et Gohar
5. Babayan	Arsen et Silva
6. Babikian	Siranouche
7. Barucq	Anaïs et Christophe
8. Bazinian	Youri et Lilik
9. Bazinian/Mardoyan	Edouard et Nariné
10. Bedikian	Samvel et Mariné
11. Bisiaux	Georges et Françoise
12. Davtian	Karen et Silva
13. Debuisson/Voskanian	Laurant et Maro
14. Delcroix	Daniel
15. Dermanyan	Alla et Tigran
16. Dupont	Bernard et Maryline
17. Galstyan/Lamarche	Garik et Louisette
18. Gambarian/Meloïan	Haïk et Gohar
19. Ghazaryan	Mariam
20. Gharibian	Guevorg et Jasmine
21. Ghazaryan/Babikyan	Samvel et Louciné
22. Hanonik	Dikran et Tamar
23. Haroutiounian	Flora
24. Jakmakian	Garo et Guislaine
25. Karapetian	Vahé et Gayané
26. Karapetyan	Sona
27. Kasparian	Jacqueline, Samvel et Angela
28. Khatchatryan	Arminé
29. Khatchatryan	Gurgen
30. Lementsian	Razmik, Jaqueline et Garik
31. Mkhitaryan	Margarit, Vahram et Gayané
32. Mughnetsyan/Bazinian	Vahé, Tatevik et Susanna
33. Parsadanian	Armen et Lianna
34. Sahakian	Armen et Elena
35. Shirinyan/Hakobyan	Seyran et Anna
36. Tadevosyan	Anna et Gayané
37. Topchian	Anahit et Emin
38. Vanuxeem	Bruno et Lena
39. Voskrichyan	Ararat et Kristina
40. Yeghshatyan	Vahé et Irina
41. Zakarian/Tadevosyan	Karen et Kristina

Liste des dons effectués à ce jour (février 2010)

1. 100 euros obtenus par Gark Galstyan dans le cadre d'une confé-rence sur l'histoire de Moscou au musée des Beaux-Arts de la ville de Valenciennes
2. 120 euros versés par Arsen Babayan

Մինչև 2010 թ. փետրվարը կատարված նվիրատվությունները

1. 100 եվրո փոխանցվել է Գարիկ Գալստյանի Վալանսիեն քաղաքի Գեղարվեստի պատկերասրահում Մոսկվայի պատմության մասին տված կոնֆերանսի համար:
2. 120 եվրո փոխանցել է Արսեն Բաբայանը:

Responsables de publication en français : Louisette Lamarche et Garik Galstyan
Responsables de publication en arménien : Garik Galstyan, Hayk Gambarian, Susanna Mughnetsyan, Jacqueline Kasparian, Manvel Margaryan
Traductions : Garik Galstyan, Hayk Gambarian, Kristina Zakarian

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Լուզեթ Լամարշ և Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Գարիկ Գալստյան, Հայկ Ղամբարյան, Սուսաննա Մուղնեցյան, Ժակլին Կասպարյան, Մանվել Մարգարյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի, Հայկ Ղամբարյանի, Քրիստինե Զաքարյանի

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12 rue Blériot, 59 260, Hellemmes-Lille
Par téléphone : 03.20.05.42.25 ou 03.20.57.45.06

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12 rue Blériot, 59 260, Hellemmes-Lille
Հեռախոսներ՝ 03.20.05.42.25 կամ 03.20.57.45.06

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

ASSOCIATION ARARAT
12 rue Blériot
59260, Hellemmes-Lille

BULLETIN D'ADHÉSION

Nom, Prénom ____
Adresse ____
____

Mail ______________________________ Téléphone ______________________

Adhère à l'association « ARARAT » pour l'année 2009/2010
a payé une adhésion de 15 euros (par famille)

(Date et Signature)